






10

13  
207.

ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՒԳԵԱՆ.

# Ո Վ Է Յ Ա Ն Յ Ա Ի Ո Ր Ը


„Սովորեցրէք սակաւ, դաստիարակեցէք շատ. ջանացէք աւելի բնաստորութիւնն ու սիրտը կրթեալու, քանձէ միտքը զարգացնելու.“



ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆ

Տպարան եղբ. Յ. եւ Ս. Աւագեանների

1900.



16446

THE UNIVERSITY OF CHICAGO

OF THE UNIVERSITY OF CHICAGO



38-2008

ԱԶՆԻԻ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ

ԱՆՄՈՌԱՆՈՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԽՈՐԻՆ ԱԿՆԱՇՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՐՈՒՄ Է ԿԵՂԻՆԱԿԸ:

---





1. Բնաւորութեան, մտքի ու կամքի կրթութեան պակասութիւնը հանապազ դարձել է բազմաթիւ ջարիքների աղբիւր մասնաւոր կեանքում. իսկ ժողովրդի լուսաւորութեան նուազութիւնը—ջարիքների աղբիւր՝ պետական կեանքում:

2. Մեզնից հալածուած յանցաւորի յետեւը՝ մեղապարտների նստարանների վրայ՝ նստած է ինքնին հասարակութիւնը, որ այսպէս թէ այնպէս մասնակից է այդ յանցանքին:

3. Յանցաւորութիւնը մի ստուեր է, որ հասարակութիւնից է ընկնում:

4. Ակրոհիւր՝ այլասերման հետ, ամենալուրջ դերն է խաղում մեղսառիթ պատճառների մէջ:

5. Չկան յանցանքներ, այլ կան միայն յանցաւորներ:





Ա.

## ՅԱՆՅՍԻՈՐՈՒԹԻՒՆ.

Իւրաքանչիւր տարի երկրագնդի շատ ու շատ տեղերում բանդերը հազարաւոր մարդիկներով են լցւում. մեծ գումարներ են ծախսուում յանցանքների դէմ մաքառելու համար:

Քայց հեղինակաւոր մասնագէտները դարձեալ խոստովանում են, թէ յանցաւորութիւնը նոյն յամառութեամբ մնում է եւ շարունակում է բազմանալ: Միմիայն Անգլիայում վերջերս նկատելի է յանցանքների նուազում:

Անգլիայում յանցաւորութեան պակասելը պէտք է վերագրել այն հետեւողաբար գործադրուած բազմաթիւ խելացի միջոցներին, որոնց նպատակն է՝ բարեկրթ չքաւոր, թշուառ դասակարգերի դրութիւնը, եւ այդպիսով արմատից չարիքն ոչնչացնել:

Գործադրուած միջոցների մէջ անշուշտ ազդեցիկ դեր են խաղում առանձնապէս դպրոցները, որտեղ վարժվում են անսւէր ու փճացած, քայց տակաւին անմեղ մանուկներ:

Որչափ որ սովորողների թիւն իւրաքանչիւր տարի աճում էր, նոյն չափով էլ համեմատաբար եւ յանցաւորութիւնն էր թուլանում:

Յանցանքը գրեթէ մի սոցիալական երեւոյթ է. անհատը մարդկութեան է պատկանում. յանցաւորն ու առաքինին միապէս կապուած են իրենց միջավայրի հետ:

Կայ սոցիալական միջավայր, որ նպաստում է բարոյական առողջութեան. այստեղ յանցանք գործելու հակումն չնչին է:

Կայ եւ մի ուրիշ սոցիալական միջավայր, ուր մի՞նտրորտը ապականուած է, ուր ընդհարվում են հակառողջ տարրեր, ուր ամէն ինչ փճանում, մեռնում է:

Այստեղ յանցանքներն ահագին ծաւալ են ստանում, եւ դառնում մի սոցիալական իրականութիւն, որ մօտիկ կապ ունի որոշ սոցիալական պատճառների հետ:

Քանի որ չկայ ճշմարիտ քաղաքակրթութիւն, աշխարհս միշտ պիտի ունենայ մի զարհուրելի ախորժակ, որին անհնար պիտի լինի միանգամայն յագուրդ տալ:

Հեշտասիրութիւնն ու շահամոլութիւնը, դիւրին միջոցներով ստակ վաստկելու ձգտումը, անչափ հարստութեան եւ յետին չքաւորութեան հակապատկերը, գոյութեան կռուի անհրաժեշտ պէտքը, կապիտալի ու սեփականութեան կենտրոնացումը, արուեստագործական կազմակերպութեան թերութիւնները, որոնք բախտի խաղալիք են դարձնում պրոլետարիատին ու անտես անում բանուորների մանուկ սերնդի կրթութիւնը, մատնելով սրան փողոցային կեանքի մոլութիւններին, կամ արհեստանոցների կասկածելի խառնիճաղանձ շրջանի ազդեցութեան, եւ որոնք վերջապէս ամենուրեք երեւան են հանում, առանց այն էլ սուր կերպով արտայայտուող անասնական մի՞ին բնազդումները—այս բոլորը դժբախտաբար երեւում է յանցաւորութեան մէջ, եւ նոյն իսկ յանցաւորութիւն է ստեղծում:

Անբարեխղճութիւն կը լինէր՝ սոցիալական այս տեսակ խճճուած յարաբերութիւնների մէջ առանց այս

ու այն նայելու յանցաւորին առաքինի անհատի հանդէպ դնել:

Մինչդեռ թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը սոցիալական երկու վիճակ է, միանգամայն իրար հակառակ:

Մէկը հաստատուած է սմբողջապէս բաւականութեան, հասարակականութեան, փոխադարձ հովանաւորութեան, օգտաւէտ աշխատանքի ու խնայողութեան վրայ, միւսը—չբաւորութեան, անօգնականութեան, եսամոլութեան, ապարդիւն աշխատանքի վրայ:

Վերցրէք որ եւ է աղքատ, անմշակ վայրի երկիր, եւ համեմատեցէք մի որ եւ է բարեշէն երկրի հետ: Մեծ քաղաքներում կը գտնէք ստէպ աւելի ստոր, աւելի ապականուած շրջան:

Այստեղ ներքնայարկերում, ուր երբեք չի թափանցում ֆիզիքական ու բարոյական բարեկեցութեան եւ ոչ մի ճառագայթ, հէնց այստեղ են բախտից հալածուածներն ապաստան որոնում:

Նոքա անցողակի են միայն տեսնում ճոխութեան փայլը, որպէս զի յետոյ այդ ամէնի դէմ ատելութեամբ բորբոքուին. նոքա չեն յարգում բնաւ ուրիշի կեանքն ու սեփականութիւնը, որովհետեւ երկուսն էլ նոցա համար մի իրական արժէք չունին. նոքա ծնվում են, թարշամում, մարտնչում եւ մեռնում են՝ բնաւ չկասկածելով թէ որոշ կարգի մարդկանց համար գոյութիւնն—երջանկութիւն է, սեփականութիւնն— իրաւունք, առաքինութիւնը—սովորոյթք, անդորրութիւնը—մշտական վիճակ:

Այստեղ է թաքնուած յանցաւորութեան բնական ու անխուսափելի բունը:

Սակայն ուշադրութեան առէք նաեւ յանցաւո-



րուծեան կենսական պայմանները, որոնց մէջ նա ծլում, ծաղկում է:

Ահա մեծ քաղաքների թաղերը, որոնք շատ անգամ կառուցուած լինելով ճահճոտ գետնի վրայ, գտնվում են ամենասոսկալի առողջապահական պայմաններում. չկայ կանալիզացիա, խմելու պիտանի ջուր. բաժնուած են նեղ ու աղտոտ փողոցների, բնակարանները սակաւօդ եւ սակաւաւոյս են. այդ թաղերը, ուր թառամում, մարում է թշուառ ազգաբնակուծիւնը, ենթակայ են անվերջ տարափոխիկ հիւանդուծիւնների, որոնք այստեղ աւելի ուծով են ծաւալվում, եւ առանց այն էլ նուազած կեանքի հիւծեքը քամում:

Ապօրինածին, անտէր երեխաներին, պոռնիկների ու պատծուած յանցաւորների զաւակներին, շրջմոլիկներին եւ այլ սոցա նմաններին կարծես վիճակուած է յանցաւորուծեան գործի բարգաւաճման ծառայելու:

Ինչ զարմանալու բան է, որ չունենալով ընտանիք, աւանդուծիւններ, բնակուծեան հաստատուն տեղ, մշտական զբաղմունք, եւ ոչ մի կապ կառավարող դասակարգերի հետ, այդ մարդիկը ընդունակ են լոկ Ֆիզիքական կարիքներ զգալու: Նոցա համար գոյուծիւն չունի ոչ մի հրապոյր, բացի ետական գրգռումից. նոցա համար չկայ որ եւ է մի այլ գործողուծիւն բացի անցողականից, որ լոկ իւր նիւծական անհրաժեշտ կարիքներին յագուրդ տալուն է ծառայում:

Գիւղերից դէպի քաղաքներ կատարուող գաղթականուծիւնն աւելի եւս ստոււարացնում է այդ բանակը, եւ յանցաւորուծեան պարարտ հող է պատրաստում:

Երբ գիւղական նոր սերունդը՝ հողի սակաւու-

Թեան կամ չգոյութեան պատճառով թողնում է մա-  
ճը, եւ բախտ գտնելու համար մեծ քաղաքներ է դ-  
մում, նա բռնուած է լինում նաեւ ի միջի այլոց ար-  
կածալից կեանքի տենչով:

Նա կարօտ է աշխատանքի, եւ ամէն կերպ ձրգ-  
տում է նոյնը ձեռք բերելու:

Բայց այնքան էլ դիւրին չէ. մրցակիցները բազ-  
մաթիւ են, եւ ամէն մի քայլափոխին—գայթակ-  
ղութիւն ու կասկածելի միջավայր:

Եւ բանդերի բնակիչների թիւն աճում է հա ա-  
ճում գիւղերից քաղաքներ թափուող աւելորդ ազ-  
գաբնակութեամբ:

Այս տեսակ բանուոր դասակարգերը սովորաբար  
բարձ են տալիս իրենց ողորմելի կեանքը վատթար  
բնակարաններում, սնվում են ամենավատ կերակուր-  
ներով, եւ ամբողջովին ենթակայ են անտեսական  
տագնապների:

Բանուորը հանապազ կանգնած է սինլքոր դառ-  
նալու ճանապարհի վրայ. իսկ սինլքորը ստէպ են-  
թարկուած է չարագործ դառնալու վտանգին:

Հետեւապէս ամբողջ սրօլետտարիատը ներկայաց-  
նում է մի առաջապահ գօրք, որ իսկոյն էլ ոչըն-  
չանդամ է թշնամու յարձակումից'—լինի դա որ եւ  
անդուժիւն կամ չարիք:

Այսպէս կամ այնպէս՝ քանի որ ստորին հասա-  
րակական դասակարգին պատկանող անհատը գիւղու-  
մըն է ապրում, նրա վրայ հնարաւոր է հսկել, եւ ինքն էլ  
արդէն իւր անձին զգուշանում է. նա սէտք է զգում  
իւր բարի անունը պահպանել, որովհետեւ գիւղն էլ  
ունի կոպուտեան, բռնութեան աւանդութիւններ,  
իւր սեփական յանցաւորութիւնը:

Բայց մեծ քաղաքներ անցնելով՝ նա լիովին  
անյայտութեան մէջ է ընկնում. դադարում է իւր

անձին զգուշանալուց եւ ցոփութեան ու անառակութեան մէջ է թաւալվում:

Այսպիսի պայմաններում են զարգանում յանցաւոր դասակարգերը, այսինքն՝ այն դասակարգերը որոնց բնորոշ գիծը յանցաւորութեան հակումն է, որ արտայայտվում է արհեստով (պրօֆեսսիօնալ) սինլքորի եւ արհեստով չարագործի վրայ:

Սրանցից միանգամայն պէտք է զանազանել պատահական սինլքորներին ու չարագործներին, որոնք փոքրամասնութիւն են կազմում:

Սոցա կեանքը միշտ կանոնաւոր է ընթացել միայն յանկարծական կիրքը, անխոհեմ յուզմունքը, կամքի վայրկենական թուլութիւնը նոցա յանցաւորութեան գիրկն է նետել:

Սոքա կարծես կորցնում են իրենց ուշքը եւ ժամանակաւորապէս գտնվում մի տեսակ զառանցման մէջ, բայց յետոյ՝ ուշագնացութիւնն անցնում է, եւ բնական կեանքը վերստին իւր նախկին շաւղով է ընթանում:

Այսպիսի դէպքերում՝ ի հարկէ պէտք չէ անուշադիր թողնել նաեւ մի կողմից օրգանիզմի կանխակալ տրամադրութիւնը, իսկ միւս կողմից՝ արտաքին շարժառիթների յատկութիւնն ու նշանակութիւնը, ինչպէս եւ կատարուած գործն ու չարագործի անձնաւորութիւնը:

Ընդհակառակն՝ արհեստով (պրօֆեսսիօնալ) յանցաւորները, որոնք բանդային հասարակութեան մեծամասնութիւնն են կազմում, իսկապէս ոչրագործ դասակարգին են պատկանում:

Իոքա մեծ մասամբ անուղղայ, գօսացած չարագործներ են. դոքա կազմում են մի ահագին խռովալոյզ տարր, ուր շաղկապուած են աղքատութիւնն



ու գռեցկութիւնը, արբեցութիւնն ու ցոփութիւնը, ծուլութիւնն ու պոռնկութիւնը:

Նոցա մէջ ինչպէս եւ քաղաքակրթուած վայրերում, գոյութիւն ունի իւր տեսակի հասարակական կարծիք, որ նոցա պահպանում է, ոգեւորում. ստեղծում նրանց համար սեփական ժողովրդականութիւն—մի խօսքով մոլութեան հերոսների համար դա նոյնպիսի մի դրդիչ է, ինչպէս եւ պարտաճանաչ վաստակաւորների համար:

Ամէն մի իրաւազանցութեան մէջ՝ հասակի, բընաւորութեան, խառնուածքի, մի խօսքով՝ անհատական հակումների հետ՝ դեր է խաղում եւ հաւաքական կամ սոցիալական գործօնը՝—միջավայրը, մշտական սլայմանները, ընդհանուր օրէնքները:

Պատահական յանցաւորի մէջ տիրապետում է անհատական գործօնը. այստեղ որոշ կերպով աչքի է զարնում ինքնին մարդը:

Իսկ արհեստով (պրօֆեսիօնալ) յանցաւորի մէջ հանդէս է գալիս սոցիալական գործօնը, ամբողջ հասարակութիւնը:

Հասարակական դասակարգերը, որոնք ապահովուած են նիւթապէս, կրթութեամբ ու դաստիարակութեամբ քաղաքացիութեան ոգով, որոնք օրօրոցից սկսած միշտ վայելել են քաղակրթութեան ազդեցութիւնը՝ յանցաւորութեան տեսակէտով բացառիկ երեւոյթ են ներկայացնում. սոցա մէջ տեղի ունեցած յանցանքները միանգամայն պատահական բնաւորութիւն են կրում:

Սակայն հասարակական խաւերը, որոնք հանապազ տանջվում են կարօտութեան ճիրաններում, խաւեր, որտեղ անհատը չարիքի դէմ մաքառելու համար ներկայումս գուրկ է հասարակական հովանաւորութիւնից, իսկ անցեալում էլ չի ունեցել հարստութեան,



լուսաւորութեան ու հզօր դիրքի տէր նախնիքներ, այդ խաւերը յանցանքն դարձնում են օրէնք, որ գլխաւորապէս հաւաքական դրոշմ է կրում:

Այս տեսակէտով՝ հասարակական ուժերը յանցաւորութեան վրայ գերակշռող ազդեցութիւն ունին. յանցաւորութեան դէմ կռուելու համար անհրաժեշտ է հէնց այդ ուժերի վրայ ներգործել:

Ժամանակ է վերջապէս ընդունել այս մեծ ձեռնարտութիւնը՝ թէ յանցաւորութիւնը կենսաբանական (բիոլոգիական) ու սոցիալական բնաւորութիւն ունի:

Բ.

### ՅԱՆՅԱՒՈՐ ՄԱՐԿԸ.

Միայն մեր առողջութիւնն ամրապնդելով՝ կարող ենք բարելաւել նաեւ մեր բարոյական ու մտաւոր յատկութիւնները:

Արդէն իսկ հաստատուած ձեռնարտութիւն է, թէ հոգեկան կազմը, հոգեկան կեանքի այս կամ այն ուղղութիւնը կախումն ունի ֆիզիքական կազմից. հետեւապէս յանցաւորութիւնն, որ կախուած է յանցաւորի ամբողջ անձնաւորութիւնից, կապուած է նախ եւ առաջ նրա ֆիզիքական կազմութեան հետ:

Բանտարկեալներին դիտող ու հետազօտող բժիշկները նկատել են, որ շատ յանցաւորներ զարմանալի կերպով տարբերվում են անմեղ մարդիկներից թէ՛ իրենց հոգեկանի եւ թէ՛ ֆիզիքականի կազմով:

Այդ հետազօտողների մէջ մեծ անուն վաստակեց պրօֆեսսօր Լամբրոզոն:

Սա գիտնականների ուշադրութիւնը դարձրեց այն կէտի վրայ, թէ յանցաւորի ուսումնասիրութեան հարցում յարմար է գործադրել այսպէս

կոչուած՝ բնապատմական մեթոդը:

Լամբրոզոյի ծառայութիւնն աւելի եւս մեծ նշանակութիւն է ստանում անով, որ նա յանցանքի, այսինքն՝ երեւոյթի փոխարէն՝ սկսեց կարգաւորապէս ուսումնասիրել յանցաւորին, այն է՝ առարկան:

Նրա հետազոտութիւնների արդիւնքն այն եղաւ, որ շուտով գիտութիւնը ձոխացաւ լրջամիտ երկասիրութիւններով, որոնք նուիրուած էին յանցաւորի բազմակողմանի ուսումնասիրութեան—նոցա մարմնական կազմի, բնախօսական կեանքի, ու հոգեկանի հետազոտութեան:

Ցանցաւորները, ինչպէս ասացինք, բաժանվում են երկու կարգի:

Պատահական յանցաւոր կոչվում են այն անձինք, որոնք որոշ հանգամանքների դրդման տակ՝ օրէնքով դատաւարտելի գործեր են կատարում:

Երկրորդ դասակարգը կազմում են արհեստով (պրոֆեսիօնալ) յանցաւորները, որոնց գործերը ոչ թէ դիպուածի, եւ ուրիշ նմանօրինակ անսպասելի երեւոյթների արգասիք են, այլ ընդհակառակն իրենց անբռնադատ մտածութեան արդիւնք. նրանք ստեղծում են այնպիսի արտաքին պայմաններ, նախորոշ հանգամանքներ, որ չարագործութիւնը ինքնին իբրեւ բնական հետեւանք առաջ է գալիս:

Ապա ուրեմն սոցա բնական կազմութիւնն որոշ առանձնայատկութիւններ, չարագործութեան բնածին հակումն պիտի ունենայ:

Այս՝ արհեստով յանցաւորների միտքը, զգացմունքները, կամքը իրանց՝ որակութեամբ վատնար են. նրանք անխոհեմ ու անհեռատես են, եւ ոչ երբեք անցեալի խրատով ուղղվում:

Ապացուցուած է, որ յանցաւորներն իրանց մշտաւոր յատկութիւններով միշին աստիճանից էլ ստոր են կանգնած:

Մանաւանդ նուազ զարգացած է նոցա մէջ բարձրը հոգեկան գործունէութիւնն—ուշադրութիւնը:

Նմանապէս յայտնի է, որ այդ անձանց բարձր զգացումները—կարեկցութիւնն ու ազնուութիւնը, ուրիշների համեմատութեամբ աւելի թոյլ են զարգացած:

Նաո յանցաւորներ միանգամայն անընդունակ են որ եւ է տեւական լարուած աշխատանքի, ուստի եւ ակամայ պարագիտներ են դառնում նոքա. «ծուլութիւնը մոլութիւնների մայրն է» ասում է հին առածը ամենայն իրաւամբ:

Բարձր զգացումների այդ թերի զարգացումը, մտաւոր ուժի ու կամքի թուլութիւնը՝ պարզ ցոյց են տալիս ընդհանրապէս յանցաւորների հոգեկան կազմի անկատարութիւնը:

Արհեստով յանցաւորներն իրենց հոգեկան կազմութիւնն երեւան են հանում ստէպ շատ կանուխ, տակաւին մանուկ հասակում:

Դեռ եւս երեսայ՝ նոքա ամէնքի զարմանքն են շարժում իրենց ստախօսութեամբ, անգթութեամբ. եւ ապա աշխատելու անընդունակութեամբ, սեռական ցանկութիւնների անժամանակեայ զարգացմամբ, չարասիրութեամբ, անտանելի են դառնում նաեւ դպրոցի մէջ:

Եւ ընդհանրապէս նկատուած իրողութիւն է, թէ այդպիսիներն յանցաւորական գործունէութիւն սկսում են տակաւին չափահասութեան չհասած:

Միմիայն ծնողների կամ խնամակալների աջալուրջ հսկողութիւնը կարող է այդպիսիներին ազատ պահել պատանեկան հասակում զանազան յանցանքներ գործելուց:

Մտաւոր ու բարոյական բթութիւնը՝ հէնց այն հասակում, երբ կարծեօք անհասն աւելի քան զգայուն



պէտք է լինի դէպ ամէն ինչ բարի, որոշ կերպով տարբերում է նոցա առաքինի մարդկանցից:

Հոգեբուժութիւնը (պսիխատրիա) մեզ գեղեցիկ ապացոյցներ է տալիս, թէ արդարեւ չարագործներից շատերն առանձին յատուկ կազմութիւն ունին, թէ կան պակասաւոր, տարօրինակ կազմութեամբ անձինք, թէ շատ յանցաւորներ զուրկ են առողջ, զարգանալու ընդունակ կազմի տէր լինելուց:

Եւ արդարեւ՝ շատ անգամ յանցաւորի ու հոգեկան հիւանդի մէջ զանազանութիւն դնել անհնար է լինում:


Այս իրողութիւնը նախ այն է յայտնում, թէ հոգեկան ու նեարդային հիւանդութիւններն ազգակից են յանցաւորութեան, եւ երկրորդ՝ թէ յանցաւորական, ինչպէս եւ հոգախտաւորական կազմը բնածին է, եւ կամ վաղ մանկական հասակում ստացվում:

Մոլի անձանց որդիքը սովորաբար այնպիսի օրգանիզմ են ժառանգում, որ կանխօրէն տրամադրուած է լինում հոգեկան հիւանդութիւնների. ահա այդ ժառանգներն այլասերվում են, եւ կամ ճիշդն ասած՝ տեսակների վատացումն ու այլասերումը սկիզբն է առնում ախտաբորբոք, յանցաւոր կազմութիւնների երեւան գալուց:

Աւելի յանցաւորներ քան թէ առաքինի մարդիկ ծնունդ են ստանում նեարդային ու հոգեկան ախտութիւններով տանջուող ծնողներից:

Վերջինների արբեցող լինելը մեծ դեր է խաղում յանցաւոր ու հոգախտաւոր ծնունդների զարգացման մէջ. արբեցողների երեխաները շատ սակաւ բացառութեամբ հոգախտաւոր եւ կամ արհեստով յանցաւոր են լինում:

Յայտնի է նոյնպէս, թէ տարիքն առած ծնողներից սերուած զաւակներն առաւել ենթակայ են յանցաւորութեան, քան թէ երիտասարդ ամուսնութիւնից առաջ եկածները:



Վերջապէս օրգանիզմի անկատարութեամբ տառապում են այն երեխայքը, որոնց ծնողները՝ միշտ բաւարար սնունդի կարօտ, իրենց կեանքն անց են կացրեմուծ, խոնաւ բնակարաններում, եւ կամ զբաղուած են եղել իրենց առողջութիւնը վտանգող նիւթերով ինչպէս օրինակ՝ արձիճով, սնդիկով, ծծումբով, նաւթով եւ այլն:

Այսպիսի հակառողջական պայմաններում աճում են կամ նեարդախտաւոր (նէյրօպատիական), եւ կամ յանցաւորական կազմուածքի տէր ուժասպառ անհատներ:

Աւելացրէք սրա վրայ նաեւ անգլիական կոչուած հիւանդութիւնը, որ նոյնպէս վերոյիշեալ պայմանների արգասիք է, եւ որը շատ յաճախ ուղեղի, հետեւապէս եւ հոգեկան ընդունակութիւնների՝ մերի զարգացման պատճառ է դառնում:

Քանի՛ քանի ընտանիքներ քարշ տալով իրենց գոյութիւնն այսպիսի հանգամանքներում՝ աշխարհ են բերում անգլիական ցաւով, կամ գանգերի անկանոնութեամբ տանջուող սերունդներ:

Այսպիսի կենսաբանական պատճառներից են առաջ գալիս նեարդախտաւոր (նէյրօպատիական) ու չարագործ ծնունդներ. միանգամայն առողջ դատողութեան դէմ կը լինէր պնդել, թէ թուլակազմ, տկար, զառամած, թիւնաւորուած օրգանիզմի տէր ծնողների սերունդներն ոչ մի տարբերութիւն չունին առողջներից:

Սակայն ծնուելուց յետոյ էլ յանցաւոր, հիւանդ, ալքոհոլից տառապող, չբաւորութիւնից հիւժուած ծնողների զաւակներն անշուշտ շարունակում են գեգերել կենսական նոյն պայմաններում, որոնք այնպէս քայքայում են նեարդային համակարգութեան բնական զարգացումը:

Տրեժէ կարիք չկայ թուերով ապացուցանելու, թէ յանցաւոր, հոգեպէս տկար, ոգելից խմիչքներն ի չարն գործածող ծնողները խիստ անբաւարար են կերակրում, վատ են պահում, կամ շատ անգամ իսկ ծեծում են իրենց որդւոց:

Եթէ մինչեւ անգամ որ եւ է երեխայ դիպուածով չի ժառանգում իւր ծնողի նեարդախտաւոր (նէյրօպատիական) կամ մոլի կազմութիւնը, քայց եւ այնպէս մանկական մատաղ հասակի աննախանձելի դըրութիւնը վերոյիշեալ դաժան պայմաններում առաջացնում է կմախքի, ապա ուրեմն գլխի ու ողնաշարի ուղեղի անկանոն զարգացում:

Արդեօք այս պայմաններում սերնդի կանոնաւոր դաստիարակութեան մասին կարող է՞ խօսք լինել:

Չէ՞ որ այս դէպքում դաստիարակվում են այնպիսի երեխաներ, որոնք արդէն ժառանգել են փճացած օրգանիզմ, մանկութեան հասակում ստացել են անբաւարար սնունդ, եւ զրկանքներով լի կենցաղ են վարել:

Եւ ովքե՞ր են նոցա դաստիարակները. նոյնպէս հիւանդօտ, մոլի, կամ կարիքներից կեղեքուած ծնողներ:

Վատթար դաստիարակութիւնը կարող է ինչպէս յանցաւորութեան, այնպէս եւ հոգեկան հիւանդութեան զարգացման պատճառ դառնալ:

Հոգեկան հիւանդութիւնների ծագման նպաստում է վատթար դաստիարակութիւնն անով, որ մանուկի միտքը յոգնեցնելով՝ պատճառ է դառնում արեան չափազանց սակաւութեան, ապա ուրեմն՝ ուղեղի որոշ փոփոխութեան:

Նմանապէս վատթար դաստիարակութիւնն ինքրն ըստ ինքեան կարող է առաջացնել յանցաւորական կազմուածք, երբ հետզհետէ խախտում



է մանուկի ուղեղի սննդառուծիւնը, եւ այդպիսով խանգարում է վերջինիս կատարեալ զարգացումը:

Նպատակայարմար դաստիարակութեամբ, թէեւ ի հարկէ ոչ յաճախ, հնարաւոր է վերափոխել փոքրահասակ յանցաւորներին, եւ այն էլ՝ շնորհիւ գործադրուած խոհեմ միջոցների, ամրապնդելով, զարգացնելով նեարդային սիստեմը:

Այս կերպ են արդէն վարվում եւրոպայի զանազան տեղերում անչափահաս յանցաւորներ ուղղելու գործում.

Չարաչար սխալվում են նրանք, որոնք կարծում են, թէ մարդս այնքան փճացած ու յիմար է, որ խօսքերի ազդեցութեան տակ կարող է անձնատուր լինել արհեստով յանցաւորի ոչ—այնքան հրապուրիչ կեանքին:

Միմիայն կենսաբանական պատճառների հետեւանք՝ թերահաս ուղեղի, անզարգացած կամքի տէր, կարեկցութեան զգացմունքից զուրկ անհատը կարող է ընտրել մի գործունէութիւն, որ տանում է դէպի բանդ, դէպի կախաղան:

Զէ՞ որ ամէն ոք բախտ է որոնում. 'ի բնէ առողջ մարդը շատ լաւ է հասկանում, թէ ո՞րտեղ է գտնվում իւր բախտը, եւ երբեք չի ընթանում մի ճանապարհով, որի ծայրը թշուառութիւն է սպասում:

Յանցաւորութեան օրգանիկական ծագումը եւ արհեստով յանցաւորի թերակատար կազմութիւնն ապացուցանելու համար՝ աւելորդ չէ 'ի նկատի առնել հետեւեալ համոզիչ փաստերը:

Ալքոհոլը յաճախակի դառնում է յանցաւորութեան պատճառ. յանցաւորներն ընդհանրապէս անզուսպ արբեցողներ են:

Այս թոյնը քայքայելով նեարդային սիստեմը, բրթացնում է բարձր զգացումները, թուլացնում է կամքը,



մտաւոր ուժերը, մի խօսքով՝ մարդկային կազմուածքը դարձնում է անկատար, չարագործութեան տրամադիր:

Ոչ—արբեցող մարդը, որ կարող չէր ոճիր գործել՝ հարբած վիճակում՝ ալքոհոլի ազդեցութեան տակ, կարող է այնպիսի յանցանքներ գործել, որոնց մասին երբեք չէր էլ երազում:

Եւ ահա օրինաւոր, գործունեայ քաղաքացին իւր օրգանիզմի տարրալուծման պատճառով դառնում է անպիտան, յանցաւոր էակ:

Իսկ մշտական արբեցութիւնը՝ օրգանիզմը ֆիզիքապէս փոփոխելով՝ անհատին վերջ 'ի վերջոյ հասցնում է խելացնորութեան կամ չարագործութեան:

Ահա եւ արբեցողի ֆիզիքական այս յատկութիւնները ժառանգաբար անցնում են հետագայ սերունդներին:

Սա բնութեան անողոք օրէնքն է:

Գիտնականները մեծ ջանքով ուսումնասիրել են այն նշանները, որոնք բնական ու յատուկ են արհեստով յանցաւորներին:

Այդ նշաններից մի քանիսն արդէն համարեա որոշուած են:

Թէեւ դրանք նկատելի են նաեւ հոգեպէս հիւանդների եւ միանգամայն առաքինի անձանց վրայ, թէեւ կան արհեստով յանցաւորներ, որոնք զերծ են այդ յատկանիշներից, բայց եւ այնպէս իբրեւ ընդհանուր կարծիք ընդունուած է, թէ որոշ յատկանիշներով յանցաւորներ, հոգեպէս ու նեարդային դրութեամբ տկարներ աւելի ստէպ են պատահում:

Յանցաւոր մարդոց վերագրուած ֆիզիքական յատկանիշները շատ բազմաթիւ են ու տեսակ տեսակ:

Արհեստով յանցաւորի վրայ յաճախ նկատուած են՝ մեծ այտուկը, մեծ ներքին ծնօտ, խիստ թեք ճակատ, միշին ծոծրակային փոսիկ (մեծ ծոծրակ), լայն բաց-

ուած ականջներ, խիստ զարգացած կրծային գեղ-  
ձեր, վերջապէս եժէ ոչ լերկ, գոնէ սակաւաբոյս մա  
զերով երես:

Գարծեալ յանցաւորների ձեռներն առաքինի ան-  
ձանց ձեռների համեմատութեամբ կարծես աւելի  
եւկայն են լինում, օրինակ՝ մարդասպանները յաճախ  
մեծ ու երկայն ձեռների տէր են. «գրպանահատների  
մատները մեծ մասամբ շատ երկայն ու բարակ են  
լինում:

Բացի այս՝ յանցաւորների երեսը սովորաբար  
գունատ-գորշագոյն է լինում, մազերը ուշ են ձերմը-  
կում, եւ նոցա մէջ արտասովոր բան չէ տեսնել դա-  
ճած մարմիններ, շիւ աչքեր. . .

Ինչ եւ իցէ, յանցաւորի այդ բոլոր բնածին ու  
ստացուած ֆիզիքական յատկանիշները՝ այլասերման  
նշաններ են, եւ շրջապատող կեանքի վերջին ծայր  
հակառողջական պայմանների հետեւանք:

Ինքնըստինքեան պարզ է, թէ յիշեալ յատկա-  
նիշների գոյութիւնն ամէն անգամ իբրեւ ապացոյց  
չի կարող ծառայել, թէ այս կամ այն անձը յանցաւոր  
կազմուածք ունի:

Ինչ որ վերաբերում է յանցաւորի բնախօսական  
յատկանիշներին, այդ դեռ եւս անորոշ է:

Օրինակ՝ պատահում են յանցաւորներ, որոնք  
զարմանալի նրբազգաց են դէպի ֆիզիքական ցաւեր.  
լինում են եւ այնպիսիները, որոնց զգայականութիւնը  
միանգամայն բթացած է:

Մի բան եւս կամբքօգօն նկատել է շատ յանցաւոր-  
ների վրայ, այն է՝ որ ամէն անբարոյական մարդիկ  
զուրկ են կարմրելու ընդունակութիւնից:

Ոմանք էլ ցոյց են տալիս, թէ ոճրագործների  
մէջ ձախլիկների թիւը շատ մեծ է. բայց այս եւս  
ապացուցուած չէ տակաւին:

Յանցաւորների մտաւոր ընդունակութիւնն առ հասարակ միջին չափից էլ ստոր է:

Թէեւ նրանց մէջ պատահում են երբեմն քիչ-շատ-զարգացած մտքի տէր անձինք, եւ մինչեւ իսկ կրթութուած, բայց այս բացառութիւնների հետ՝ անչափ է հոգւով թոյլ ու աղքատների բազմութիւնը:

Ո՛րքան շատ են իսկական տկարամիտներ, որոնց ընդունակութիւններն իսպառ մարել են: Ո՛րքան անգրագէտներ, որոնք ոչ կարդալ գիտեն, եւ ոչ էլ գրել, չնայելով որ շատերն դպրոց իսկ գնացել են բայց առանց բնաւ ոչինչ սովորելու:

Այս տեսակ տկար ուղեղի առանձնայատկութիւնն է՝ չկարողանալ մտքեր կապակցել, ստացուած տպաւորութիւնները կշռել ու նրանց կարգաւորել:

Սրանով միայն կարելի է բացատրել, թէ ինչո՞ւ յանցաւորներն այնքան անխոհեմ են գտնվում, որ յաճախ ոստիկանութեան ձեռքն են ընկնում:

Յանցաւորների յիշողութիւնն առհասարակ զարգացած է, թէեւ այդ աւելի մեքենայական պէտք է լինի:

Ընդհակառակն նրանց երեւակայութիւնը խիստ թոյլ է. աչքից հեռու գտնուած որ եւ է աւարկայ կենդանի կերպով պատկերացնել յիշողութիւնները շօշափելի կերպով ձեւակերպել, վերացական գաղափարներ արտայայտել—այս բոլորը նոցա միանգամայն անձանօթ է:

Յանցաւորը զբաղվում է երբեմն բանդում ընթերցանութեամբ, գրում է, մինչեւ անգամ բանաստեղծութիւններ է յօրինում, բայց նրա մտքի թռիչքը ծանր է եւ երկրաքարշ:

Նրա յանցաւոր երեւակայութիւնն անզօր է վերացնելու նրան անուրջների ֆանտաստիկ աշխարհը. նրա երեւակայութիւնը—մի կոյր, անթեւ թռչուն է,



որ անգոր է սաւառնելու ազատ օգուժ. Թռիչքն անհեծեծ է, եւ ոչ բնաւ կախարդիչ. . .

Շատերն առհասարակ զարմանում են յանցաւորների խորամանկութեան վերայ:

Սակայն այդ խորամանկութիւնները շատ մաշուած բաներ են, եւ նոյնքան հին, որքան եւ բան դելի պատերը:

Նոր հնարագիտութիւններ նոցա մէջ խիստ հազուադէպ են. սովորաբար հին հնարքները շտապով փոփոխում են:

Վերջապէս, ե՞ծ է մինչեւ իսկ ապացուցուի յանցաւորների հնարագիտութիւնն ու խորամանկութիւնը, բայց դարձեալ կարելի չի լինիլ հաստատել, թէ նրանց մտածողութեան ընդունակութիւնը զարգացած է:

Բաւական է յիշել, թէ մի քանի անբան կենդանիներ բնազդի շնորհիւ միշտ զարմանալի խորամանկութիւն են արտայայտում:

Յանցաւորները լինելով խստասիւրտ, ծոյլ, խաբերայ, անբանական, թե՛թեւսուլիկ, տրամաբանական մտածողութեան անընդունակ՝ միանգամայն սնափառ են:

Իրենց յատուկ պարծենկոտութեամբ յօրինում են անհեծեծ պատմութիւններ, եւ զբուցում յոռի պերճախօսութեամբ:

Անշուշտ այդ պատմուածքների կարծեցեալ հերոսները, որոնք իբր թէ ամէնքի զարմանքն են յարուցել հէնց իրենք յօրինողներն են: Նոքա ձգտում են հանապազ դրուատել իրենց անձը յանցանքների մէջ, եւ իրենց զանազան ոճիրներ վերագրել:

Պէտք է ասենք նաեւ, թէ չարագործները բնաբաշատիրտ չեն:

Ընդհակառակն՝ նոքա նոյնպէս փոքրոգի են,

ինչպէս եւ պարծենկոտ. ճշմարիտ է այն խօսքը, թէ «անագնիւ մարդը նախ եւ առաջ երկչոտ է»:

Այս է պատճառը, թէ ինչո՞ւ յանցաւորները, որոնք ընդհանրապէս վրէժխնդրութեան հակումն ունին, ստեպ փախուստ են տալիս իրենց մտադրած ոճիրը գործելուց, երբ հարուածն երես երեսի պէտք է տալ՝ մինչեւ իսկ անգէն թշնամուն:

Յանցաւորների մեծամասնութիւնը կարծես զուրկ է խղճի խայթից:

Եթէ եղեռնագործն իմանար ու համոզուած լինէր, թէ վատ է գործում, եթէ ներքին ձայնը տանջելով՝ թախանձագին կրկնէր՝ «դու չարիք ես գործում», անշուշտ նա յետ կը կանգնէր, կամ գոնէ պատահաբար չարիք կը գործէր, եւ ոչ թէ սովորութեամբ. . .

Յանցաւորը շատ գեղեցիկ զգում է, որ կռիւ է մղում հասարակութեան մէջ տիրող օրէնքների դէմ. սակայն այդ կռիւը նա չի մղում իւր խղճի օրէնքների դէմ, որովհետեւ այս դէպքում յաղթահարուած կընկնէր:

Շատ կարելի է, յանցաւորական ճանապարհի սկզբում նրա ներքին խորքերից դուրս է բղխում խղճի թոյլ ու խորհրդաւոր ձայնը, եւ կարծես երազի մէջ շշնջում նրա ականջին՝ «դու վատ ես գործում»:

Բայց նրա մէջ իշխող կրքերի հուժկու ձայնը խլացնում է այդ բոլորը, եւ հրամայում «կողոպտի՛ր, սպանի՛ր եւ ինձ յագուրդ տուր». . .

Արբեցութիւնը պահանջում է շշմեցնող խմբերներ, տուփամուրտութիւնը—մերկ կանայք. եւ մարդս ընկճվում է այդ բոլորի տակ՝ արդարացնելով իւր անձը, թէ ինչո՞ւ ուրիշների հետ հաւասարապէս մասնակից չլինի կեանքի խրախճանքին:

Յանցաւորը գայթակղեցնում է սեփական խիղճը, եւ գայթակղեցնելով՝ իրաւունք է համարում յանդրգոհօրէն ձեռք մեկնել ամէն մի բանի. . .

Գ.

### ՅԱՆՅԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Յանցանքը սովորաբար բաժանում են երկու տեսակի՝ յանցանք սեփականութեան դէմ, եւ յանցանք անձնաւորութեան դէմ: Կարելի է բաժանել եւ այլ կերպով, հիմք առնելով յանցանքի «շարժառիթի իսկական բնութիւնը», ինչպէս ասում է Լօրանը:

Եթէ ՚ի նկատի չառնենք այն յանցանքները, որ գործում են բարոյապէս տկարները, խելացնորները, ընկնաւորները, դրականապէս կարելի է հաստատել, թէ յանցաւորութեան պատճառը կամքի բնական վիճակից խոտորումն է՝ կա՛մ դէպի չափազանց թուլութիւն, եւ կամ ընդհակառակն դէպի բուռն ուժգնութիւն, եռանդ:

Նախ՝ անգիտակ յափշտակիչներ, որոնց կամքը կարծես նիւթիւմ է. սոքա իրենց յանցանքները կատարում են բնազդօրէն, անզգուշաբար, եւ որ գլխաւորն է, նոյն իսկ ակամայ:

Ապա՝ ծուլութիւնից դրդուած յափշտակիչներ, որոնք մինչեւ իսկ օրուայ հացի համար աշխատելու անբնդունակ են զգում իրենց:

Այս երկու կարգի անձնաւորութիւններին կարելի է անուանել կր աւ ո Ր ա կ ա ն գ ո ղ եր. սրանց կամքի գործունէութիւնը թոյլ է, եւ կամ միանգամայն չնչին:

Իսկ հզօր կամքի տէր գողերը կրքերի խաղալիկ են, կրքերի, որոնց թելադրիչը մեծ մասամբ գինին ու կինն է:

Բռնութիւն բանեցնող յանցաւորները մեծ մասամբ նեարդային, հոգեպէս վնասուած ժառանգական կազմի տէր անհատներ են:

Շատ անգամ սոցա մէջ հանդիպում են նաեւ



օրինաւոր, հեզաբարոյ մարդիկ, բայց նրանց կամքն ուժաւորաւի է լինում բուն զգացմունքներից եւ անզուսպ ձգտումներից. սոցա յանցաւոր գործողութիւնը կատարվում է անդրադարձաբար (րեֆլեկտոն), եւ այնքան արագ, որ կշռադատելու միջոց իսկ չի մնում:

Այս տեսակ անհատներն առանց նախորոշ մտադրութեան կարող են ակամայ մարդասպաններ դառնալ: Սոցա սովորական գործողութիւնը՝ կրքից առաջացած յանցանք է:

Նախապէս սպանել որոշող մարդասպաններին կարելի է հետեւեալ դասերին բաժանել. մարդասպաններ. այս կարգի անձինք սպանութիւն են գործում նախապէս մտածուած դիտաւորութեամբ, դիւրին կերպով հաճոյքներ ձեռք բերելու համար:

Աւրօհոլիկներ, որոնց կամքը յանցագործութեան վայրկեանին կաշկանդուած է թոյնով. սպանութեան շարժառիթը սոցա մէջ ստէպ գողութիւնն է լինում:

Այն անհատները, որոնք յանցանք են գործում հասարակական բարոյականութեան դէմ, որոնք յանդգնօրէն սպառնում են ողջախոհութեան, եւ բռնաբարութիւններ գործում, բաժանվում են հետեւեալ դասակարգերի.

Աւրօհոլիկներ, որոնց ուժերներն առաջ են գալիս միմիայն հարբած դրութեան ժամանակ:

Մոլի կամ ապականուած անձնաւորութիւններ՝ սեռական անբնական հակումներով. այսպէս են օրինակ ամէն տեսակ արուագէտները:

Ծերունիներ, որոնք սովորաբար տուփանք են տածում դէպի մանկահասակ աղջիկներ:

Սեռական անդամի չափազանց գրգռուն երեք ուղ անհատներ, որոնք հարկադիր



ժողովակալութեան պատճառով յաճախ բռնաբարութիւններ են կատարում. սորա անասնական կրքի ներկայացուցիչներ են:

Այս բոլորը կարելի է ձեւակերպել աւելի համառօտ:

ա.) Գ ո ղ եր. մեծ մասամբ ծոյլ, միմիայն հաճոյքի հետամուտ անհատներ. աշխատութիւնից խուսափող, սրանց ախորժակը՝ ապրելու միջոցներից միշտ աւելի է:

բ.) Առանց նախորոշ մտադրութեան՝ մարդասպաններ—կամ աւելի ճիշտ՝ բռու՛ն յոյգերից յափշտակուած, մղուած ոճրագործներ, որոնք երբեմն ատելութեամբ են լցուած լինում՝ եւ կամ արծաթսիրութեամբ մոլուած:

գ.) Բ ո ն ա բ ա ր ու մը—բացառապէս սեռական անդամի չափազանց գրգիռ ունեցողների բաժինն է:

դ.) Վերջապէս հասարակական բարոյականութեան ու ողջ ախոհութեան դէմ կատարուած յանցանքները սովորաբար ալքոհոլիկները, ծերերը, կամ խելացնորներն են գործում:

Ի վերջոյ ինքնասպանութիւնն էլ մարդասպանութեան մի տեսակն է. ինքնասպանները—բռնութիւն բանեցնողներ են. այն յանցաւորութիւնն ու անգթութիւնը, որ գործում են իրենց անձի վերաբերմամբ, նոյնն է եթէ ձեռք մեկնէին ուրիշի կեանքի դէմ:

Ինքնասպանների ահագին տոկոսն՝ իսկապէս ասած, յանցաւորներ են, որոնք միայն կերպարանափոխուած են հասարակական միջավայրում:

Իրաւագէտների մեծ մասը մատնանիշ է անում այն իրողութիւնը, թէ արմատացած յանցաւորները գրեթէ բնաւ անձնասպանութիւն չեն գործում. հետեւապէս այդ գիտնականների կարծիքով ինքնա-

սպանուածիւնը հարկաւ պէտք է յանցանք համարել:

Ինքնասպանութեան նկատմամբ եղած այս հայեացքը անհրաժեշտ է ընդհանրացնել, որպէս զի իրենց կեանքին վերջ դնել ցանկացողները նախապէս իմանան, թէ հասարակութեան կողմից ի՞նչ դատապարտութիւն պէտք է սպասեն:

Նոքա պէտք է հաւատացած լինին, թէ իրենց յանցաւոր վարմունքով երբեք չեն շարժիլ օտարների վըշտակցութիւնը. եւ ընդհակառակն՝ ի նկատի թող առնեն հասարակութեան այն հաստատուն համոզմունքը, թէ ոեփական կեանքի դէմ սպանուածեան փորձ կատարելը հաւասար է մարդասպանութեան:

Ինքնասպանները, որպէս եւ մարդասպանները— սնափառ ու եսամոլ են. նոքա հակահասարակական բնազդների ներկայացուցիչ են:

Հասարակութիւնն ընդունակ է կատարելագործուելու եւ ազնուանալու մի միայն բարձր ու համակրելի բնոյթների ընտրողութեամբ, ուստի եւ միանգամայն սառնասրտութեամբ պէտք է նայի, թէ ի՞նչպէս ինքնայոժար չքանում են յառաջադիմութեան ճանապարհից իւր յետասնաց անդամները, եսամոլները, որոնք զուրկ են մերձաւորին սիրելու զգացմունքից եւ հոգու վեհութիւնից, որոնց վրայ է հիմնուած ժամանակիս քաղաքակրթութիւնը:

Քանի որ մարդու մէջ կայուն է կեանքը, նա կարող է կատարելագործուել ու աշխարհին ծառայել:

Բայց ծառայել աշխարհին նա կարող կը լինի միայն կատարելագործուելով. իսկ կատարելագործուել—միայն ծառայելով աշխարհին:

Լամբրոզոյի կարծիքով՝ ինքնասպանութիւն են գործում անզուսպ եւ դրդիչների խաղալիկ անհատները. այդ յանցանքը նկատելի է նաեւ այն անձանց վրայ, որոնց կամքի ոյժը սկարացած է:

### ՅԱՆՅԱՆՔ ՈՒ ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ,

Քոյր մօլուծիւնների մէջ ուշագրաւ տեղ են բռնում պոռնկութիւնն ու յանցանքը:

Այս երկուքը խիստ սերտ են կապուած. եւ զուր չէ՛ որ շատերը պոռնկութիւնը համարում են կանացի յանցաւորութեան մի ձեւ:

Շատ կարելի է, այն համոզմունքը, թէ պոռնկութիւնից դէպի ոճրագործութիւն մի քայլ է, թէ առաջինը ծառայում է իբրեւ բանդի նախադուռն, չափազանցութիւն համարուի, բայց եւ այնպէս անկարելի է ժխտել, թէ պոռնիկների մէջ յանցաւորութեան տրամադրուածները համեմատաբար աւելի բազմութիւ են:

Կան մի կարգ պոռնիկներ, որոնք մօտիկ կապեր ունին գրպանահատների հետ. շատ պոռնիկներ էլ չեն վարանում ամէն մի յարմար դէպքում իրենց յաճախորդների գրպանները մաքրազարգել:

Եւ այս ոչ թէ գողութիւն են համարում, այլ իրենց արհեստը գործադրելու ճարտար եղանակ:

Ոճրագործութեան ու պոռնկութեան փոխադարձ կախումն ապացուցանելու համար՝ բաւական է մատնանիշ անել այն սերտ կապակցութիւնը, որ յաճախ կինում է ծանր յանցաւորների ու պոռնիկների մէջ:

Եղել են շատ դէպքեր, երբ փոքր եկամուտ ունեցող երիտասարդները, հրապուրուելով պոռնիկներից, սկսել են վաանել իրենց հարստութիւնը, եւ ապա գողութեան են դիմել, եւ այսպիսով առաջին քայլն են արել յանցանքների ասպարիզում:

Ճշմարիտ է՝ պոռնկութիւնը հնագոյն դարերից ի վեր գոյութիւն ունի, ինչպէս եւ մարդկութեան պատմութեան մէջ չի եղել մի դարամիջոց, որ զերծ լինէր ոճիրներից:



Սակայն ներկայ ժամանակուսս պոռնկութեան մեծածաւալ ընդարձակումը եւ յանցանքների անհամեմատ արագ աճումը—հարկաւ պէտք է իրենց առանձին խոր պատճառներն ունենան:

Ի դէպ՝ անհրաժեշտ է ի նկատի առնել, թէ պոռնկութիւնն, որ առաջներում մի արտասովոր երեւոյթ էր համարվում, այժմ արդի հասարակական կազմի սիւներից մէկն է, մի անհրաժեշտ չարիք է ամենազօր մամոնայի տիրապետութեան շնորհիւ:

Եթէ նպատակ դնենք հետազօտելու այն հարցը, թէ կարելի՞ է ընդհանրապէս ոչնչացնել յանցանքներն ու պոռնկութիւնը, եւ կամ գոնէ թուլացնել յիշեալ չարիքները, այն ժամանակ անկասկած հարկաւոր է որոշել այդ երկու չարիքների սկզբնապատճառը:

Վերոյիշեալ երկու հայեցակէտը, ինչպէս արդէն մի անգամ ասացինք, կարելի է հաշտեցնել եթէ մի կողմից՝ պոռնկութիւնն ու յանցաւորութիւնը բացատրենք իբրեւ որոշ, բնածին աննորմալ յատկութիւններ, որոնք տեղի ունին յանցաւորների ու պոռնիկների մարմնի կազմուածքում. միւս կողմից՝ եթէ ոճրագործութեան ու պոռնկութեան պատճառները որոնենք հասարակական պայմաններում, սոցիալական միջավայրում:

Կին—բժիշկ Տառնոփսկայան պնդում է, թէ պոռնիկներն ու գող կանայք աննորմալ, այլասերուած, (կամ այլասերուող անձնաւորութիւններ են:

Տառնոփսկայան ուսումնասիրել է միայն վեւիկորոսական նախանգների ռուս կանանց:

Այդ դիտողութիւնների հիման վրայ նա այն եզրակացութեան է եկել, թէ պոռնիկների այլասերման յատկանիշները չափազանց բազմաթիւ են. գանգի այլանդակուած ձեւ, դէմքի անկանոն կազմութիւն ասսիմետրիա), դուրս ցցուած այտոսկրներ, խորացած

կամարածեւ քիմք, առամների պակաս զարգացում, նաեւ ցցուած կոպտածեւ ականջներ, բարակ շըր-  
թունքներ. . .

Ֆիզիքական մի այսպիսի այլասերում կարելի է բացատրել նախընթաց սերունդների թոքախտով, հարբածութեամբ ու ժառանգականութեամբ:

Տառնովսկայան կարծում է, թէ սովորական գող կանայք ֆիզիքական ու հոգեկան տեսակէտով խիստ նմանութիւն ունին պոռնիկների հետ:

Այս երեւոյթը բացատրելի է միատեսակ ժառանգականութեամբ եւ միեւնոյն միջավայրի ազդեցութեամբ, որտեղ ապրում են թէ առաջիններն եւ թէ երկրորդները:

Ե.

### ԿԱՐԻՔ ՈՒ ԱՂԲԱՏՈՒԹԻՒՆ.

Կարիքն ու աղքատութիւնը տղամարդուն յանցաւոր են դարձնում, իսկ կին մարդուն պոռնկութեան գիրկը նետում:

Ակներեւ մի փաստ է, թէ ազգաբնակութեան քիչ թէ շատ նիւթապէս ապահովուած դասը նուազ տոկոսով է յանցաւորներ տալիս, եւ որ պոռնիկները՝ հազուադիտ բացառութեամբ, ծագում են հասարակութեան ամենաչքաւոր խաւերից:

Յանցաւորութեան սոցիալական պայմաններից ունեցած կախումը սարգ երեւում է նրանից, որ՝ օրինակ Գերմանիայում, կանանց գործած ոճիրները թուով 5-6 անգամ աւելի քիչ են, քան թէ տղամարդկանց յանցագործութիւնը:

Եթէ կինը տղամարդի համեմատութեամբ աւելի սակաւ յանցանք է գործում, պատճառը պէտք է

վերագրել ոչ թէ կանանց աւելի բարձր բարոյականութեան, այլ որ նոքա աւելի թուլակազմ են, եւ նոցա գործունէութեան շրջանն աւելի սահմանափակ է:

Յանցաւորութեան այդ մեղմացուցիչ պատճառներից մէկն էլ կնոջ տնային փակ կեանքն է ու հասարակական լայն կեանքից հեռու լինելը:

Էլլիսի կարծիքով՝ կանանց սակաւ ոճիր գործելու պատճառներից մէկն է նաեւ պոռնկութիւնը:

Թէ պոռնկութիւնը չլինէր, որ մի տեսակ արգելական դեր է խաղում, կանանց մեծամասնութիւնը՝ ներկայ հասարակական դժուար հանգամանքներում կը դիմէր միմիայն յանցագործութեան:

Արդի պայմաններում այն ընտանիքների աղջիկները, որոնց եղբայրները յանցաւոր են դարձել, զարմանալի գուգադիպութեամբ մտնում են հասարակութիւնից ոչ-այնքան մերժուած պոռնիկների դասակարգը:

Պահպանելով կապեր ոճրագործների հետ՝ որոնց եւ իրենց եղբայրներն են պատկանում, նոքա օգտուվում են օրէնքով թոյլատրուած եկամուտի աղբիւրից:

Իտալացի գիտնական Ֆերրիանին եւս այն կարծիքին է, թէ պոռնկութիւնն է պատճառ, որ կանայք ոճրագործութեան մէջ սակաւ մասն ունին, եւ պընդում է, թէ պոռնկութիւնն ինքնըստինքեան յանցանք չհամարուելով՝ դառնում է յանցաւորութեան զոհերի կայան:

Յիրաւի, շատ տղամարդիկ, ջնայելով գոյութեան համար իրենց գործ դրած անդուլ ջանքերին, ՚ի վերջոյ ստիպուած են լինում տեսնել իրենց նիւթականի կատարեալ քայքայումը. նոքա հակառակ իրենց ցանկութեան՝ անկարող են օրինական ճանապարհով հայթայթել ընտանիքի սնունդը, եւ անյուսալի դրութեան մէջ են ընկնում:



Այս այսպիսի ծանր հանգամանքներում քաղցի տառապանքներից եւ մահուան ճիրաններից ազատուելու միայն մի միջոց է մնում— խախտել քրէական օրէնսդրութեան սահմանը:

Սակայն կանանց համար այս տեսակ պայմաններում կայ եւ մի այլ ելք, որից զուրկ է տղամարդը. պոռնկութեան մէջ կինը միշտ կարող է գտնել նիւթական որոշ բարեկեցութիւն, եւ սովամահ լինելու վտանգից փրկուել:

Ով իսկապէս չի փորձել խորամուխ լինել այդ թշուառ արարածների դրութեան մէջ, այնպիսին ի հարկէ կարող է ինքնահաւանութեամբ նայել «ընկած կնոջ» վրայ, եւ աշխարհիս ապականութեան վրայ լալ ու ողբալ:

Ի այց եթէ մտածես, եթէ ի՞նչպիսի ներքին կռիւ է մղուել նախ քան այդ վճռական քայլն անուելը դէպի յանցանք կամ պոռնկութիւն, եթէ մտածես, որ բազմամիւ նման դէպքերում միակ դրդիչը ծնողական սէրն է եղել, կամ ազգակցական կարեկցութիւնը, կամ որդիական գգացմունքը, այն ժամանակ ատելութեան փոխարէն առաջ կըգայ կարեկցութիւն, ծաղր ու ծանակի փոխանակ—գայրոյթ դէպի հասարակութիւնը. չէ՞ որ այդ հասարակութիւնն ինքն է ստեղծել այդպիսի ախտեր, եւ ինքն էլ դէպ այդ ամէնը անկարեկից է մնում, եւ մինչեւ իսկ ամենայն սառնութեամբ նրանց մօտից է անցնում:

Բերլինում 45 տարեկան մի գրագիր աշխատանքի պակասութեան պատճառով սովամահ լինելու վտանգին էր մատնուած:

Սորա 39 տարեկան կինը, որ դեռ եւս չէր կորցրել իւր նախկին գեղեցկութիւնը, ամուսնու համաձայնութեամբ որոշում է պոռնկութեան դիմել, որպէս զի հնարաւորութիւն ունենայ ամբողջ ընտանիքը սովամահ լինելուց ազատել:



Այնուհետեւ այդ կինը ոստիկանութեան ձեռքն է ընկնում եւ ենթարկվում է բժշկական հսկողութեան:

Ամօթից ու յուսահատութիւնից ընկճուած՝ վերջապէս երկու ամուսիններն իրենց փոքրահասակ զաւակի հետ վճռում են թոյն ընդունելով անձնասպան լինել . . .

Ընդհանրապէս հանգամանքների թշուառ զոհերն անտրտունջ ենթարկվում են իրենց ճակատագրին:

Բայց բաւական է, որ նոցանից մէկը օրէնքը լսախտէ, թէ կուզ մի կտոր հաց գողանալով՝ իւր սրտին մօտ մարդկանց սովից փրկելու համար, եւ ահա կրում է նա իւր պատիժը «օրէնքի ու արդարութեան» անունով:

Այնուհետեւ այդ դժբախտ էակներն աշխարհի առաջ հռչակվում են իբրեւ յանցաւոր եւ անվերջ հալածվում:

Նմանապէս եւ կինը, որ պռոնիկ դառնալու հէնց առաջին քայլափոխին բարբերի վրայ հոկող ոստիկանութեան ձեռքն է ընկնում, այլ եւս դժուար է վերադառնում իւր նախկին օրինական կենցաղին:

Պռոնկութեան կնիքն արդէն դրոշմուած է նրա ճակատին եւ հասարակութիւնը՝ փոխանակ օգնութեան ձեռք կարկառելու, ատելութեամբ իրանից հեռու է մղում, արհամարանքով երես է դարձնում եւ խտասրտութեամբ պահում է նրան չբաւորութեան մէջ:

Շատերը հակառակ են այն կարծիքին, թէ յանցաւորներն ընկերական աննպատ պայմանների արգասիք են, եւ իբրեւ ապացոյց առաջ են բերում այն փաստը, թէ աղքատ երկիրներում ոճրագործութիւնները համեմատաբար նուազ են տարածուած. իսկ ընդհակառակն հարուստ երկիրները տալիս են ընդհանրապէս մեծ թուով յանցանքներ եւ մասնաւորապէս սեփականութեան դէմ գործուած ոճիրներ:

Այս առարկութիւնը միանգամայն անհիմն է, քանի որ այստեղ ակնյայտնի կերպով սխալ են հասկանում «աղքատ» բառը:

Աղքատ ազգութիւնները նոքա են, որոնց ժողովրդային մասսաներն ունեւոր են. մինչդեռ հարուստ ազգերի մէջ մասսան գլխաւորապէս տառապում է աղքատութեան Ֆիրաններում:

Հակառակ խօսողներն ուշագրութեան չեն առնում եւ մոռացութեան են տալիս այն փաստը, որ մեծաքանակ կարողութիւնները հարուստ երկիրներում բացառապէս գտնվում են փոքրամիւր ընտրեալների ձեռքում, որոնց կողքին միաժամանակ չքաւորութեան մէջ տառապում է բազմահոծ պրոլետարիատը, որ անհաշտ թշնամական դիրք է բռնում հանապազ առաջինի դէմ:

Ապրուստի միջոցներ ձեռք բերելու դժուարութիւնը, որ ստէպ աւելի եւս ծանրանում է արդիւնաբերութեան տագնապների ժամանակ, բազմամիւր բանուորներ հասցնում է անելանելի աղքատութեան եւ ապա—գողութեան:

Նմանապէս երաշտ աարիները, երբ աղքատութիւնը սովորաբար հսկայական ծաւալ է ստանում, աւելի յայտնի են լինում սեփականութեան դէմ գործուած յանցանքների շատութեամբ:

Աղքատութիւնն անթիւ յանցանքների դրդիչ կարող է լինել:

«Գժբախտների մէջ, ասում է Պրուդոնը, աղքատութիւնն արտայայտվում է տարտամ անօթութեամբ, որ գոյութեան իւրաքանչիւր րոպէին, իւրաքանչիւր տարին, ամբողջ կեանքին շարունակվում է. այդ անօթութիւնը մարդուն չի սպանում մի օրուայ մէջ, բայց բովանդակում է ամէն տեսակ զրկանք ու վիշտ. նա անդադար հիւժուում է մարմինը. քայքայում է միտքը, անբարոյականացնում է խիղճը, այլաստերում է տե-

սակը, ծնում է այլ եւ այլ մոլութիւններ ու հիւանդութիւններ, արբեցութիւն, 'ի միջի այլոց նախանձ, գործելուց փախուստ, հոգու ստորութիւն, խղճի անզգայութիւն, բարքերի կոպտութիւն, ծուլութիւն, մուրացկանութիւն, վերջապէս պոռնկութիւն ու գողութիւն»:

Մոլութիւնների մէջ, որոնք շատ անգամ յանցաւորութեան դրդիչ են լինում, գոյութիւն ունի ա գ ա հ ու թ ի լ ը ն ասած ախտը, որով վարակուած են բազմաթիւ յանցաւորներ:

Ազահութիւնն է այն շարժառիթը, որ ստիպում է սփիւնէր գործել անձնական հարստութիւն գիզելու համար. խարդախութիւններ, նենգամիտ սնանկութիւններ, հաւատարմութեան ռանհարութիւն, խաբերայութիւն ու գողութիւն—այդ բոլորը տեղի է ունենում շքեղ ապարանքներում ապրելու, ոսկեայ ու արծաթեայ անօժներով ուտելու համար, եւ փոքր ինչ անզգուշութիւն—եւ ահա պատրաստ է բանդը եւ ընտանիքի կազմալուծումը. . .

Արդէն ապացուցուած է, որ տնտեսական աննախանձելի պայմաններն առաջացնում են զանազան սոցիալական ախտեր. եւ այս կարծիքն աւելի ու աւելի շատ կողմնակիցներ է ստանում, որոնք, ընդհանրապէս ասելով, երկնչում են միանգամայն պատասխանատու յայտարարել արդի հասարակական կազմը՝ իւր վնասաբեր երեւոյթներով:

Այդ կողմից շատ հետաքրքիր է պրուսական պարլամենտին 1895 թ. տրուած զեկուցագիրը:

Յիշեալ զեկուցագրի կարծիքով պետութիւնը պարտաւոր է օգնութեան հասնել աշխատանքից զրկուած այն անհատներին, որոնք ձգտում են սեփական ոյժերով ձեռք բերել ապրուստի միջոցներ. պարտաւոր է պաշտպանել հասարակութեան օգտակար

անդամներին՝ սոցիալական ու բարոյական անկումից, որին նորա ենթակայ են չքաւորութեան ու սինլըորութեան պատճառով:

«Միւս կողմից՝ անհրաժեշտ է թեթեւացնել այն անձանց դրութիւնը, որոնք, իրենց կամքին հակառակ, ընկել են, եւ այդպիսով հնարաւորութիւն տալ նոցա վերստին դառնալու գոյութեան բնական պայմաններին»:

Թողնենք օրէնքը. այստեղ գլխաւոր դերը պէտք է ստանձնէ ինքը հասարակութիւնը:

Հասարակութիւնը գոնէ իւր անձնական շահերից դրդուած՝ օգնութեան ձեռք պէտք է կարկառէ կարիքին ու աղքատութեան:

## 2.

### ՅԱՆՅԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՊՈՌՆԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,

Նատերն ընդունում են, թէ պոռնկութեան ու յանցաւորութեան նպաստող պայմանների մէջ մեծ դեր են խաղում ներկայ ժամանակումս՝ ամուսնանալու դժուարութիւնները:

Այսպէս՝ կարելի չէ ժխտել, թէ ամուսնանալու ձգտման ու պոռնկութեան մէջ փոխադարձ կապ կայ. հնար ունենալով պոռնիկների միջոցով բաւականութիւն ստանալու՝ մարդիկ խոյս են տալիս ընտանեկան կեանք ստեղծելուց, եւ վտանգի տակ են ձգում իրենց բարօրութիւնը:

Միւս կողմից էլ չի կարելի անտես անել անյաջող ամուսնութիւններից ծագող հիասթափումը:

Այն ընտանիքները, որոնց հիմքը սիրոյ վերայ հաստատուած չէ եղել, եւ որոնք արդէն զաւակների



տէր են, միշտ ենթակայ են չարաբաստիկ տարրալուծման. այսպիսի հանգամանքների մէջ տեղի են ունենում քստմանելի տեսարաններ, նոյն իսկ սպանութիւններ. երեխայքը մեծ մասամբ առանց հսկողութեան են մնում, եւ գրեթէ առանց դաստիարակութեան:

Ամէն ինչ այստեղ կորստի է դիմում:

Նոյնն է լինում եւ այն դէպքերում, երբ ամուսնութիւններն ըստ երեւութին են թէեւ սիրուց մղուած են եղել, բայց յուսախաբ դարձած:

Սպանուած է կեանքն ու եռանդը, մինչեւ իսկ առանց զաւակների:

Պօէզին փոխվում է հասարակ պրոզայի:

Ամուսնութիւններն թիւն ընդհանրապէս կապ ունի տնտեսական պայմանների հետ:

Այդ թիւր թէեւ տատանվում է արդիւնաբերութեան ճգնաժամերի համեմատ՝ այնուամենայնիւ ցոյց է տալիս իւր նուազելու ձգտումը:

Չնայելով, որ սեռական մերձաւորութեան ընազդը կարելի է զսպել առանց երբեք առողջութեան վընաս տալու, եւ պէտք է իսկապէս զսպել, ինչպէս ապացուցանում են բժշկականութեան յայտնի ներկայացուցիչները, բայց եւ այնպէս՝ ամուսնական կեանքի փոխարէն այժմ կարծես սովորական է դարձել արտաքոյ ամուսնութեան կենսակցութիւնը թէ՛ հարձակալութեամբ, եւ թէ՛ պոռնկութեամբ:

Այս երեւոյթների հետեւանք՝ աշխարհ են գալիս ապօրինի զաւակներ, էլ չենք յիշում սիֆիլիսն ու վննեքական ախտերը, մարդկութեան այդ պատուհասները:

Վիճակագրութիւնն ակներեւ ցոյց է տալիս, թէ մեծ քաղաքներում, ուր մեծապէս ծաղկում է պոռնկութիւնը, ապօրինի ծնունդներն աւելի մեծաթիւ են, քան թէ գիւղերում, որտեղ պոռնկութիւնը գրեթէ բացակայ է:

Այդ կարծեցեալ հակասութեան պատճառն այն պէտք է համարել, թէ պոռնկութիւնն ինքնըստինքեան աւելի մեծ փորձանք է աղջիկների անարատութեան համար, քան թէ խանդավառ սէրը. պոռնկութիւնը ցոփ ու անառակ կեանքի զարգացման մեծապէս նպաստում է:

Անզգամ, անառակ ստահակի վաւաշոտութեան յագուրդ տալու համար՝ պոռնկութիւնն այլ եւս անբաւարար է դառնում, եւ ահա նա ուրիշ ճանապարհներ է որոնում:

«Կանանց հաւատարմութիւնը», «աղջիկների կուսութիւնը» ապահովուած չէ բնաւ այդպիսիների յարձակումներից. հէնց այդ արգելեալ պատուղներն են նոցա հրապուրում:

Անզուսպ կիրքը, նետրդերի թեթեւամիտ խրտտումն, յաճախ նաեւ սովորական սնափառութիւնը դրդում են վաւաշոտին գայթակղութեան բոլոր հնարներով աղջիկ խաբել եւ անդունդ գլորել:

Եւ աղջիկը յիշաւի կընկնի, որովհետեւ նրա մեղսագործութիւնն առաջ է գալիս ոչ թէ մաքուր սիրուց, այլ անբարոյականութիւնից:

Բայց երբ անառակն իւր նպատակին է հասնում, նրան այլ եւս ոչինչ չի կապում խաբուած աղջկայ հետ, նա դարձեալ նոր զոհեր է փնտրում:

Սակայն ամուսնանալու դժուարութիւնը նպաստում է ոչ միայն պոռնկութեան ու ապօրինի զուակների բազմացման, այլ եւ կողմնակի կերպով ազդում է յանցաւորութեան վրայ:

Ապօրինի զուակները վրէժխնդրութեամբ լցուած են լինում դէպի հասարակութիւնը, որ իրենց նկատմամբ մեծ անարդարութիւն է ցոյց տալիս:

Ուստի եւ ամէն տեսակ յանցաւորների թիւը բազմացնում են, որովհետեւ արդէն իսկ շատ կամ

սակաւ չափով կորած արարածներ են, թէ՛ ֆիզիքական, եւ թէ մտաւոր ու բարոյական կողմից:

Հէնց նոյն իսկ նոցա ապօրինի ծնունդն զօրաւոր պատճառ է պէսպէս հիւանդութիւնների ու մահուան. սարէցտարի նոքա աւելացնում են այդ տկարութիւնների թիւը, առատ նիւթ տալով խելացնորութեան, բժամտութեան, ինքնասպանութեան, եւ ամէն ատեսակ յաւցանքների:

Ապօրինի ծնունդները, որոնք բնաւ դատապարտութեան արժանի չեն, որ այսպէս են ծնուած, հասարակութեան աչքում կատարեալ դժբախտութիւն են համարվում, եւ մարդիկ ամէն կերպ աշխատում են նրանցից ազատուել:

Բազմաթիւ են այն դէպքերը, երբ տղամարդը ձգում է իւր սիրուհուն, նրա վզին թողնելով եւ իւր ապօրէն կենակցութեան արգասիքը:

Եթէ այդ կինը չքաւոր է, ինչպէս եւ միշտ այդպէս է լինում, նա ստիպուած է լինում բացի իւր անձնական գոյութիւնից հոգ տանել եւ երկրորդ էակի մասին:

Խելացի դատախարակութեան մասին այսպիսի պայմաններում խօսք իսկ կարող չէ լինել. մայրը գոհ կը լինի, եթէ միայն յաջողի բրաինքով ապրուստ ձեռք բերել. եւ շատ անգամ այսպիսի դէպքերում՝ երեխայի մահը կարծես իբրեւ ցանկալի փրկութիւն սպասվում է:

Եթէ մայրը պատկանում է հասարակութեան ունեւոր դասին, այն ժամանակ դժբախտ զաւակը յանձնվում է օտարների հոգատարութեան, որոնք երեխայի վիճակի վերաբերմամբ միանգամայն անտարբեր են գտնվում:

Հետեւապէս պարզ է, թէ ինչու ապօրինի ծնունդների մահացութեան դէպքերն աւելի շատ են

օրինաւոր ծնունդների համեմատութեամբ. կեանքի առաջին տարում՝ ապօրինի զաւակների գրեթէ կէսը մեռնում է, իսկ օրինաւոր ծնունդների մէկ հինգերորդականը:

Ուրեմն կենդանի մնացած ապօրինի տղայքն էլ հէնց սկզբից գոյութեան կռւում գտնվում են վատթար պայմանների մէջ. թէ ֆիզիքապէս եւ թէ բարոյապէս՝ իրենց շրջապատողների համեմատութեամբ ստոր են կանգնած, ուստի եւ նպաստում են յանցաւորութեան ու պոռնկութեան անեցման:

Սրա պատճառը հարկաւ հեշտ է հասկացվում. . .

Զքաւորութիւնը, վատ օրինակը՝ մինչեւ անգամ օրինաւոր ծնունդի երեխաներին ձգում են յանցագործութեան ճանապարհը:

Ուրեմն քանի՛ քանի անգամ աւելի անկման պատճառ կարող է դառնալ նոյնը այն երեխաների համար, որոնք երբեք բախտ չեն ունեցել լսել իրենց հօր կամ մօր ձայնը:

է.

## ԸՆՏԱՆԻՔ ՈՒ ՅԱՆՅԱՆՔ.

Յանցաւորների թիւը զգալապէս աւելանում է ո՛չ միայն ապօրինի՝ այլ եւ այն երեխաների շնորհիւ, որոնք թէեւ օրինաւոր ամուսնութեան պտուղ են, բայց մեծացել են առանց ծնողների հսկողութեան, կամ մանկական հասակում որբ են մնացել:

Ընտանեկան անկարգ կեանքը, անբաւարար դաստիարակութիւնն ու վատ օրինակը մեծ ազդեցութիւն են թողնում մանկան տպաւորուող մտքի վերայ, եւ պատճառ դառնում, որպէս զի այդ պայմաններում սնուած մարդը՝ իւր կեանքի օրերը բանդերում վերջացնէ:



Մի բանի գործարանական բաղաբներում գրտնուած որբանոցների մէջ իւրաքանչիւր այցելուի աչքին է զարնում, թէ ի՛նչպէս յիշեալ ապաստարանների որդիգիրներն ակնյայտնի կերպով տարբերվում են մտաւորապէս ու բարոյապէս այն բոլոր երեխաներից, որոնց ծնողները, թէեւ ապրում են, բայց ոչ իրենց ընտանիքի, այլ գործարանի բարօրութեան համար:

Սակայն ո՞ր գործարանը հոգ է տարել թշուառ բանուորների զաւակների վերայ:

Միթէ կա՞յ որեւէ բարոյական կապ բանուորի եւ գործարանատիրոջ մէջ:

Բանուորական թաղերում վխտում են այդպիսի երեխաներ՝ կանաչ—դեղնագոյն դէմքերով, մաշուած, կարկտուած ու աղտոտ շապիկներով, գրգգուած մազերով, որոնք նոցա աղտոտ ձեռներն են զբաղեցնում:

Ներկայումս հազուադէպ երեւոյթ է, երբ հայրն ամբողջ շաբաթներով բանում է տնից դուրս:

Բայց այդ աշխատանքի ջնջին վարձը յաճախ չի բաւականանում, ուստի շատ անգամ մայրն էլ ստիպուած է լինում կողմնակի աշխատանքի յետեւից ընկնել եւ ամբողջ օրերով տնից հեռու մնալ:

Արդեօք այսպիսի պայմաններում կարելի՞ է խօսք բանալ ընտանեկան կեանքի մասին:

Երեխաները յանձնվում են հարեւանների հսկողութեան, որոնք իրենք եւս նոյն ծանր վիճակի մէջ են հեծում, եւ սեփական գործերով զբաղուած լինելով, ի՛նչ աչալուրջ հոգատարութիւն կարող են ունենալ, այն էլ օտար զաւակների վերայ:

Երեխաներն իրենք իրենց են թողնուած, եւ ոչ ոք չի հոգում նոցա կանոնաւոր ուսման վերայ:

Ամբողջ օրերով երեխայքը թափառում են փոս

ղոցներում իբեկնց հասակակիցների՝ նոյնպիսի դժբախտների ընկերակցութեամբ, եւ իրենց ամէն մի քայլափոխին ննթակալ են բազմատեսակ գայթակղութիւնների:

Եւ ահա զուրկ որ եւ է հսկողութիւնից, նորա փճանում են, դառնում անառակ, եւ ՚ի վերջոյ յանցագործների շարքը մանում:

Եթէ հետազօտենք բանդերում գտնուած 16-20 տարեկան գողերի ու մարդասպանների ծագումը—ասում է Գերօսիէն—կը տեսնենք, որ նորա մեծ մասամբ բարոյապէս փճացած երեխաներ են, որոնց ոչ մի սանձ չի պահում յանցանքների անդունդը գլորուելուց, եւ ուր նորա հասել են իրենց ծնողների դատապարտելի անհոգութեան շնոհիւ:

Փոքրահասակ յանցաւորների ու պոռնիկների մէջ զարմանալու չափ բազմաթիւ են այնպիսիներք, որոնք դպրոցական ոչ մի կրթութիւն չեն ստացել:

50,000 ոմբագործներից, որոնք 1870 թուին լըցուած էին նիւ—եօրկի բանդերում, 18,500 հոգին բնաւ գրել չգիտէին եւ շատ վատ էին կարգում:

Պարիզի 4500 պոռնիկ կանանցից 2500 հոգին բոլորովին անգրագէտ էին:

Թէ ի՞նչ առնչութիւն կայ դպրոցական կրթութեան ու յանցաւորութեան մէջ, դրան պարզ օրինակ է տալիս Անգլիան:

1840 թուին, երբ Անգլիայի պետական ամբողջ ծախքը ուսումնարանների վրայ հաւասար էր 10,610 ֆունտ ստերլինգի, ընդհանուր դատապարտուածների թիւը կազմում էր 20,000 հոգի, մինչդեռ 1890 թ., երբ ամբողջ դպրոցական ծախքը հասել էր 1½ միլիոն ֆունտ ստերլինգի, դատապարտուածների թիւն իջել էր մինչեւ 9000 հոգու:

«Մենք շատ հեռու ենք այն մտքից, ասում է

Հիրշը, թէ յանցաւորութեան թուի նուագուժը միմիայն դպրոցական գործի բարգաւաճման պէտք է վերագրել:

«Անկասկած դպրոցական կրթութեան բարուքուժը եւ տարածուժը զգալապէս նպաստում է յանցաւորութեան ծանր տեսակների մեղմանալուն:

«Դպրոցական նպատակայարմար կրթութիւնը մի շիտակ զէնք է դառնում գոյութեան կռուի մէջ, եւ հանապազ պաշտպանում կեանքի բազմաթիւ փորձանքներից»:

Միեւնոյնը կարելի է ասել նաեւ սրտնկութեան մասին:

Անբաւարար աշխատանքը հազուագիւտ դէպքերում միայն ստիպում է անարատ կնոջ ընկնել հէնց առաջին պատահողի, իրեն փող առաջարկողի գիրկը:

Բայց այդ անկման գլխաւոր շարժառիթը մեծ մասամբ կ'ընտմէ է այն թիւր հասկացողութիւնը, որ նա ունի իւր արած քայլի նշանակութեան մասին, եւ որը բնական հեատեանք է թերակատար դաստիարակութեան, ամօթխածութեան բացակայութեան, ծնունդների՝ անից դուրս ունեցած զբաղմունքների եւ այլ անտեսական պատճառների:

Հասարակութեան որոշ շրջաններում փոքրահասակ յանցաւորների վերաբերմամբ ամէն անգամ երեմիականներ են լսվում, թէ «երիտասարդութիւնը վայրենացել է»:

Այդ մարդիկը խիտ միջոցներ են առաջարկում, բայց երբեք նեղութիւն չեն կրում խորազնին հայեացք ձգել ու հեատազօտել այն հարցը, թէ ինչի՞ց դրդուած այդ թշուառներ յանցանքների ասպարէզն են նետուել:

Բերենք մի օրինակ, որ խորհրդածութեան նիւթ կարող է տալ նրանց, որոնց սրտին մօտ են պատանիների դաստիարակութեան շահերը:

Մի քանի ամիս սրանից առաջ Բերլինի դատաստանում քննվում էր փոքրահասակ գողերի մի ընկերակցութեան գործը:

Դպրոցական հասակի երեք տղայ, որոնցից մէկն արդէն երկու անգամ պատժուած էր գողութեան համար, իսկ միւսը նկատողութեան էր ենթարկուել իրեր թաքցնելուն համար, մեղադրվում էին, թէ միասին գողութիւն են կատարել:

Երկու մեղադրեալների ծնողները ներկայ էին գործի քննութեան, եւ յայտնել էին, թէ երեխաներն ամբողջ օրերով իրենք իրենց էին թողնուած, որովհետեւ իրենք ծնողները միշտ զբաղուած էին տնից դուրս բանելով:

Եւ երեխայքը ստիպուած էին իրենք հոգ տանել սեփական գոյութեան վրայ:

Յիշեալ մեղադրուածներից մէկը դատապարտուեց երկու, միւսը՝ մէկ ու կէս տարով բանդարգելութեան, իսկ երրորդը՝ որովհետեւ ապացոյցներ չկային, թէ եւ արդարացաւ, բայց տարուեցաւ ուղղիչ ապաստանարանը, որովհետեւ ծնողներն իրենց անզօր էին զգում՝ որ եւ է կրթիչ ազդեցութիւն ունենալ մոլորուած զաւակի վրայ:

Արդ՝ աւելորդ է հարց տալ, թէ ո՞վ է գլխաւորապէս մեղաւոր այդ երեխաների բարոյապէս փճանալուն մէջ. աղքատ ծնողները, որոնք օրն ի բուն մի կտոր չօր հացի համար գոյութեան դաժան կռիւ էին մղում, թէ՛ հասարակութիւնը, որ այդպիսի փաստերի երեւան գալուն առիթ է տալիս:

Հարկաւո՞ր է արդեօք աւելի բացայայտ ապացոյց, թէ ինքը հասարակութիւնն է կրթում նմանօրինակ յանցաւորներ:

Այդ արարածները հասարակութեան համար իսպառ կորած են. պատիժ կրելուց յետոյ անշուշտ վեր-



ստին կընթանան յանցաւորութեան ուղիով, եւ վերջ ի վերջոյ իրենց կեանքի վախճանը կը գտնեն տաժանակիր աշխատանքներում կամ դահճի ձեռքում. . .

Արդեօք աւելի խոհեմ դաստիարակութեան պայմաններում եւ սոցիալական բարեյաջող հանգամանքներում նոքա յանցաւոր կը դառնայի՞ն. . .

Որբացած կամ ծնողներից լքուած զաւակները, քանի որ զուրկ են քիչ թէ շատ լաւ ընտանիքների կամ օրինակելի կրթական ապաստանարանների ազդեցութիւնից, շատ հասկանալի կերպով նպաստում են յանցաւորութեան ու պոռնկութեան աճման:

Շտակէյի ցուցմունքները հաստատում են, թէ օրինաճնունդ սնչափահասների մէջ, որոնք Բերլինի բանդում իրենց պատիժն էին կրում, 60% որբ էին:

Պարիզի 2700 պոռնիկներից 1255 հոգին որբ էին, որոնք անձնատուր էին եղել այդ զբաղմունքին յուսահատութիւնից ու անօգնականութիւնից:

Գոյութեան կռուում կորչելու երկիւղն այնքան մեծ է այս երեսի վրայ թողուած էակների համար, որ օգնութեան ձեռք կարկառելն բարոյականութեան ու արդարութեան պահանջներից մէկն է: \*)

Միանգամայն դժբախտ են այն երեխաները, որոնց ծնողներն իրենք զբաղուելիս են եղել ոճիրներով կամ պոռնկութեամբ:

Յանցաւոր ծնողների 2670 զաւակները, որոնց Ֆերէն գտել էր 8230 անչափահաս բանդարկեալների մէջ, հարկաւ մեղաւոր չէին իրենց ներկայ վիճակի համար:

\*) Չխօսելով Տաճկահայաստանի „վերջին որբերի“ մասին, դժբախտարար այդ թիւն անելացաւ նաեւ վերջերս Ախալքալաքում տեղի ունեցած երկրաշարժից: Շատ ու շատ բարի ցանկութիւններ ու բաղձանքներ երեւցան լրագիրներում, շատ գրեցին „մշտական որբանոցների“ բացման մասին. բայց երբ— ահա մի հարց. . .

Նոյնը կարելի է ասել նաեւ այն 12,000 պոռնիկների մասին, որոնք, ինչպէս ասում է բժիշկ Պիանը, ընկել էին այդ մոլութեան մէջ իրենց ծնողների անհոգութեան ու անառակութեան պատճառով:

Այստեղ կրկին ամենամեծ դերն է խաղում ակրոհոլը:

«Թունդ խմիչքները—ասում է Ֆերրիանին—անմիջական կապ ունին յանցաւորութեան հետ, որը ակրոհոլի շնորհիւ ստանում է մի տեսակ ոյժ ու հրապոյր»:

Լորանը հաստատում է, թէ բանդերում իւրաբանչիւր տան յանցաւորից գոնէ ունիւր ակրոհոլիկ են:

Արդեօք սրանից կարելի է եզրակացնել, թէ բոլոր ակրոհոլիկները յանցաւորներ են դառնում:

Ո՛չ, բայց նոքա դիւրաւ կարող են դառնալ:

Ալքոհոլն անդամալուծում է ուղեղային գործողութիւնները, ոչնչացնում է կամքը, որի շնորհիւ լայն ասպարէզ է բացվում բարկութեան, վատթար դրդումների եւ բնագոյների համար:

Ալքոհոլի չափազանց գործածութիւնը թուլացնում է աշխատելու ընդունակութիւնը, տանում է անհասին դէպի վատթար շրջանները, ջլատում է զանազան գայթակղութիւններին ընդդիմադրելու ոյժը, խլացնում է խղճի ձայնը եւ ոճիրների աստիճաններով վայր է գլորում:

Ինչպէս արդէն ասացինք, ակրոհոլականութիւնը կապուած է որոշ հոգեկան բնածին հիւանդութեան հետ:

Ալքոհոլն՝ այլասերման հետ միացած, ամենամեծ դերն է խաղում մեղստուիթ պատճառների մէջ:

Մարբօն մի շարք դիտողութիւններով գտել է, որ յանցաւորների 40% տուժում է իրենց հայրերի ակրոհոլականութեան համար:

Անկասկած՝ արբեցողների բնորոշ յատկութիւն-

ները փոխանցվում են որդւոց, որոնք ծննդեան առաջին օրերից դատապարտուած են յանցանքների:

Սրան զուգընթաց է եւ այն հանգամանքը, որ ժառանգականութեան հետ միասին բազմապատկվում է հիւանդութիւնը եւ ոճիրներ գործելու հակումը զօրանում:

Միանգամայն հասկանալի է, թէ ինչու Հիւսիսային Ամերիկայի այն նահանգներում, ուր օրէնքով արգելուած է ալքոհոլ քաշելն ու վաճառելը, յանցաւորութիւնը նուազում է զարմանալի կերպով:

Ը.

## ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՅԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԱԼՔՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

Լաւ բնակարանն ընտանիքի ֆիզիքական ու հոգեկան բարեկեցութեան առաջին պայմանն է. նա դառնում է կանոնաւոր ընտանեկան կեանքի ու երեխաների բարոյական դաստիարակութեան անհրաժեշտ պարագան:

Շատ ու շատ դժբախտութիւնների պատճառը կենսական վատ կացութիւնն է, որ վերջը յանցանքների, պոռնկութեան եւ զանազան մոլութիւնների անսպառ աղբիւր է դառնում:

Բնակարանների թանկանալն իւր ամբողջ ծանրութեամբ ընկնում է սուղ եկամուտ ունեցողների վերայ, իսկ բնակարանների մի մասը վարձով տալը միանգամայն վնասակար է:

Ահա թէ ի՛նչ է ասում այդ մասին Բրաունը:

«Երկսեռ երեխաները ստիպուած են լինում բնէ իրենց ծնողների հետ միասին մի մահճակալի վրայ, շատ անգամ էլ միյարկի տակ օտարների հետ:

Ընտանեկան կացութեան հրապոյրն այսպիսով նսեմանում է. եւ ահա շատերի համար գինետունը հանգստութեան աւելի գրաւիչ տեղ է ներկայացնում. քան թէ կնոջ ու երեխաների ընկերակցութիւնը մի յարկի տակ, որի մի մասն երբեմն իսկ ստիպուած են լինում օտարներին վարձու տալ. նեղուածք լինելը հանապազ անվերջ խռովութիւնների ու վէճերի առիթ է դառնում»:

Բնակարանի պէտքը վնասում է բանուորին ո՛չ միայն տնտեսականապէս, այլ եւ բարոյապէս:

Բաւական է միայն մտաբերել, թէ ի՛նչպիսի նեղ տարածութեան վրայ է կուտակուած ամբողջ ընտանիքը, թէ ի՛նչպէս դժուար է իրարից բաժանել երկու սեռը, երբ երեխաների սեռական բնազդներն արդէն զարգացած դրութեան մէջ են:

Տարաբախտաբար երեխաները ստէպ շատ կանուխ հանդիսատես են լինում ընտանեկան կեանքի գաղտնի կողմերին, եւ անժամանակ կորցնում ամօթ-ղածութեան զգացմունքը:

Նոցա անքերի առաջ շատ յաճախ կատարվում են այնպիսի տեսարաններ, որ տակաւին կարող են չհասկանալ. բայց մանկան ուղեղը շատ զգայուն է, եւ խիստ շուտ է ըմբռնում այն տպաւորութիւնները, որոնք տեղի են ունենում նրա ներկայութեամբ:

Եւ երբ երեխայի մէջ զարգանայ զգայականութիւնը, այն ժամանակ մանուկի մէջ թաքնուած տպաւորութիւնները յարութիւն առնելով՝ սարսափելի հետեւանքներ են առաջ բերում:

Կենակցողի բարոյականութիւնն էլ այդպիսի հանգամանքներում վտանգի է ենթարկուած:

Ընդհանրապէս նեղուածք բնակարաններում ոչինչ չի կարելի գաղտնի պահել. եւ եթէ բնակարանը վարձու տուող ընտանիքը բարոյապէս ընկած է,



կենակցողն էլ շուտով կը ծանօթանայ մոլուծիւնների հետ, մանաւանդ՝ եթէ կողմնակի ազդեցութեան զուգընթաց լինին եւ ուղղակի առաջարկներ:

Այս բոլորը վերաբերում է ընդհանրապէս մեծ քաղաքներին:

Բայց եթէ ինչ է կատարվում մեզ մօտ, աւելորդ է եթեւեւակի հայեացք ձգել Կովկասի մեր ամենահարուստ քաղաքի Բաքուի վրայ, ուր միլիոններ ու հազարաւոր բանուորներ կան, եւ տեսնել՝ եթէ ի՞նչպէս են ապրում այդ եւրոպացիները:

Ինչպէս յայտնի է՝ նաւթային հանքերի աշխատութիւնը համարվում է դաժան ու վտանգաւոր գործերից մէկը:

Բանուորից պահանջելով լարուած ուշադրութիւն եւ մեծ զգուշութիւն, այդ գործը մի քանի ժամուայ ընթացքում բոլորովին թուլացնում է նրան, ծածկում կեղտի եւ մուրի շերտով:

Այս բոլորը տանելի կը լինէր, եթէ աշխատութիւնը վերջացնելուց յետոյ՝ բոլոր բանուորները հնարունենային լաւ մաքրուել, լուացուել եւ հանգստանալ առողջ բնակարաններում:

Տարաբախտաբար վերջինիս վերաբերմամբ Բախխան—Սաբունջու հանքերի բանուորները մեծ մասամբ գտնվում են միանգամայն անտանելի պայմաններում, այնպէս որ մինչեւ իսկ եթեւեւ յոյս չունին խոնջութիւնից յետոյ օրինաւոր հանգիստ տալ իրենց մարմնին:

Միայն մի քանի նաւթատէրեր իրենց բանուորների համար կառուցել են առողջապահական պահանջներին ու համեստ ապրելու քիչ եւէ շատ յարմար բնակարաններ: Մնացեալները կեղտոտ ու զազրալի որջեր են:

Նաւթային բանուորների ստուշար մեծամասնու-

Թիւնը պատասպարվում է շէնքերի ստորին ու նկուղային յարկերում, որոնք սովորաբար կառուցուած են առանց որ եւ է տեխնիքական կանոնների:

Ընդհանրապէս ցած տների յատակների տակ կանգնած է լինում ջրալի, գարշահոտ ցեխ, կամ աւելի լաւ ասած ուղղակի ջուր, մահաբեր բակտերիաներով լեցուն:

Սա դեռ եւս լաւ է համարվում. եղել են դէպքեր, երբ այդ նկուղների մէջ ապրողներն ամէն օր դռըներով ջուր են դուրս Թափել իրենց բնակարաններից:

Ինչպէս են ապրում մարդիկ այդ գետնափոր խողովներում, երեւակայել իսկ դժուար է:

Աղօտ լոյսը հազիւ հազ է Թափանցում փոքրիկ աղտոտ ու մուծ պատուհաններից. եւ արեւի ճառագայթներն երեւան են հանում չորս կողմը տիրող Թշուառ պատկերը:

Բնակարաններում տիրում է հեղձուցիչ, ապականուած օդ, ամբողջապէս արտաշնչումներով ծրծուած. առաստաղից ու պատերից ծորում է մի տեսակ լպրծուտ հեղուկ. յատակի վրայ՝ ջուր ու ցեխ, կարծես կատարեալ աշնանային եղանակ լինի:

Թարմ օդից ներս մտնող մարդու վրայ այդ կենդանի գերեզմանների օդն այնպէս սարսափելի է ազդում, որ գլխի պտոյտ է սկսվում:

Եւ ահա այսպիսի պարագաներում մարդիկ քար են տալիս ամիսներ, տարիներ. հասկանալի է, Թէ ինչպէս այդ բոլորը ազդում է ներքնայարկերում ապրողների առողջութեան վրայ:

Հայրենիքից այստեղ գալով առողջ, առոյգ, կենսունակութեամբ լի, նոքա այսպիսի հանգամանքների շնորհիւ դառնում են նուազ ու տկար. փոս ընկած աչքերի հայեացքը կորցնում է իւր փայլը, այտերը

գունատվում եւ հողի գոյն են ստանում, ոտքերի մէջ առաջ է գալիս ռեւմատիզմ, եւ ընդհանրապէս կազմուածքը քայքայվում է:

Եւ ի՛նչ է մնում թշուառ բանուորին այս պայմաններում—գինետուն եւ պոռնկութիւն իւր սիֆիլիսով, եւ բաւական է այստեղ մի թեթեւ անզգոյշ քայլ: որ յանցաւորութիւնը բաց անէ իւր կլանիչ բերանը.

Ասում են, թէ վերջերս տեղային առողջապահական յանձնախումբը մի փոքր կենդանութիւն է արտայայտում իւր գործունէութեան մէջ, թէ նաւթատէրերն էլ տեղից շարժուել են եւ արդէն սկզբնական քայլեր են անում իրենց բանուորների կեանքը բարելաւելու համար:

Թ.

### ՅԱՆՅԱՒՈՐԻ ՈՒԿԻՆ.

Արդ՝ կարելի չէ բնաւ տարակուսել, թէ պոռնկութեան ու յանցանքների պատասխանատուութիւնը գլխաւորապէս ընկնում է սոցիալական պայմանների վրայ:

Միւս կողմից հարկաւոր չէ մոռանալ, թէ սոցիալական թշուառ պարագաների ազդեցութեամբ՝ պոռնկութեան կամ յանցաւորութեան անձնատուր եղած մարդոց հետ գոյուցութիւն ունին, թէեւ թուով անհամեմատ նուազ, իսկապէս հոգեկան-հիւանդ ոմրագործներ:

Ուշադիր ու փորձուած դիտողը այդպիսի անհատների մէջ դիւրաւ կարող է նկատել հոգեկան խանգարման յատկանիշներ:

Այս օրինակ՝ դէպքերում արդէն գործ ունինք ոչ թէ յանցաւորների, այլ հոգեպէս հիւանդների հետ,



որոնք չեն հասկանում իրենց արարքների նշանակութիւնը, ուստի եւ այդ գործողութիւնների համար նոցա չի կարելի պատասխանատուութեան ենթարկել:

Լօս֊գ. բժշկի կարծիքով «բարոյական թերութեամբ» տառապող այդպիսի անհասներն՝ իրենց հոգեկան յատկութիւնները կա՛մ ժառանգութեամբ են ստացել, եւ կամ թէ պատանեկութեան ժամանակ այլասերուելով. ապա ուրեմն վաղ հասակից սոցամէջ չի լինում բարոյական քննադատութիւն ասած բանը:

Այդ անհատները հոգեկան կոյրե՛ր են. . . .

Յոյց չտալով հանդերձ ակներեւ մտաւոր խանգարմունքներ եւ կամքի թուլութիւն, նոքա այնուամենայնիւ անընդունակ են որ եւ է գործնական զանազանութիւն դնել «բարւոյ» ու «չարի», բարոյականի ու անբարոյականի մէջ, եւ ընդհանրապէս մի տեսակ հակումն են արտայայտում դէպի անբարոյական ու յանցաւոր գործողութիւններ:

Յիշեալ անձնաւորութիւնները հասկանում են «բարւոյ» ու «չարի» միայն տեսական տարբերութիւնը. նոցա մէջ չկան՝ քիչ թէ շատ չափով. այն հրապուրիչ կամ վանող զգացմունքները, որոնք առողջ մարդկանց մէջ երեւան են գալիս վերոյիշեալ գաղափարների նկատմամբ:

Բայց որովհետեւ բոլոր գործողութիւնների շարժառիթները թաքնուած են այդ զգացմունքների մէջ, ուստի եւ այդպիսի անհատների աչքում իրենց արարքների բարոյական պատճառներն ոչ մի նշանակութիւն չունին:

Մանկութիւնից օժտուած լինելով վատթար ձրգտումներով՝ վերոյիշեալ անհասներն իրենց չանձի մէջ պատկերացնում են վրիժառութեան, ապիրատութեան օրինակելի տիպեր, եւ վառուած են զուարճա-



մուլութեան անանց ծարաւով:

Նոցա գործերը ղեկավարող շարժառիթն անսահման եսականութիւնն է:

Այս տեսակ անձինքներից, որոնց հոգեկան դրութիւնը «բարոյական իտիօտիզմի» անուան է ստացել, կազմակերպվում են սովորական յանցաւորների գնդերը, աշխատութեան տների անուղղայ ծոյլերի խմբերը, եւ որոնց տեղը իսկապէս հոգեկան հիւանդների ապաստանարանն է:

Գերմանացի գիտնականները, ինչպէս Զոմբերը, Կնեխարը, Մէօլին, Զանդերը, ապացուցանում են, թէ պատժի ենթարկուած յանցաւորները յաճախ ժամանակաւորապէս հոգեկան տկարներ են, եւ թէ շատ անգամ յանցանքը զարգացող այլասերման մի առանձին տեսարանն է կազմում, որ վերջ ի վերջոյ հասնում է կամ խելագարութեան եւ կամ լիակատար իտիօտիզմի:

Այդ է պատճառը, որ բանդերում տեղ են գրտնում ահագին տոկոսով խելացնորներ, իսկ միւս կողմից էլ հոգեբուժարանները լի են այնպիսի անձինքներով: որոնք իրենց յանցագործութեան համար արդէն պատժի են դատապարտուած եղել:

Յայտնի պրոֆեսսոր Մենտէլը, որ նոյնպէս հոգեկան-հիւանդ յանցաւորների գոյութիւնն է ընդունում, կարծում է, թէ վերոյիշեալ անհատների հոգեկան թուլութիւնն առաջանում է նրանից, որ ուղեղի զարգացումը կանգ է առնում ժառանգական կամ մանկութեան հասակում ներգործող պատճառներից:

Այսպիսի տկարներ լաւ են հասկանում, թէ ի՞նչ է «բարին ու չարը» նոքա գիտեն տասը պատգամները, բայց դժբախտաբար այդ բոլոր հասկացողութիւնները նոցա մէջ բարոյական օրէնքների նշանակութիւն չեն ստանում: նոքա բարոյականութեան բոլոր

պահանջները համարում են իբրեւ ոստիկանական կարգադրութիւններ:

Ի նկատի պէտք է առնել, թէ այսպիսի այլասերուած անհատների յանցաւորական յատկութիւնները ժառանգաբար անցնում են, ուստի եւ հասարակութիւնը մեծապէս վնասվում է:

Պոռնիկների մէջ էլ, Բլաշկոյի կարծիքով, գոյութիւն ունին, թէեւ սակաւաթիւ տոկոսով, կանայք, որոնք իրենց հոգեկան տկար առանձնայատկութիւններով՝ նախօրօք վիճակուած են այդ արհեստին զոհուելու:

Յիրաւի այդ տեսակ կանանց (ինչպէս եւ վերոյիշեալ այլ մարդոց) մեծամասնութեան սեռային պահանջներն այլանդակուած են:

Դոքա բնածին պոռնիկներ են, որոնք երբեմն նոյն իսկ ամենափայլուն նիւթական պայմաներում՝ ամենայն հաստատութեամբ դիմում են իրենց բնատուր կոչման:

Այդ դժբախտները, եթէ մինչեւ անգամ տեղաւորուին բարեյաջող պայմանների մէջ, նորից վերադառնում են իրենց կեղտոտ զբաղմունքին:

Սակայն նոյնը չի կարելի ասել պոռնիկների այն հոծ մեծամասնութեան նկատմամբ, որը կազմվում է միջին կանանց մաստայից:

Պոռնկութեան զոհ՝ ի հարկէ լուրջ աշխատասէր, կամքի տէր կանայք կարող չեն լինել:

Բնածին դանդաղկոտութիւն, հեշտասիրութիւն, զուարճամոլութիւն, անհոգութիւն, եռանդի բացակայութիւն՝ կանանց անկման մեծապէս նպաստող յատկութիւններ են:

Հոգեկան-հիւանդ բնածին յանցաւորներից զատկայ եւ անհատների մի այլ դաս, որ թէեւ օրէնքի տեսակէտով իր գործերի համար պատասխանատու է,

բայց սերուած լինելով զարգացման ստոր աստիճանի վրայ կանգնած ճնողներից՝ իւր թոյլ կամքով անզօր է հրապուրանքներին դիմադրելու:

Որքան ցաւալի լինի այս տեսակ անհատների արտաքին դրութիւնը, այնքան էլ հեշտութեամբ ընկճվում են նոքա հրապոյրների հուժկու յորձանքի տակ:

Յիշեալ յանցաւորները, իրենց դիմադրելու թոյլ ոյժի ու նետարդային կեանքի յաճախակի ցնցումների պատճառով, գոյութեան կռուում աւելի վատ հանգամանքների մէջ են գտնվում, քան թէ առողջ նետարդային կազմուածքի տէր անձինք. սրանով պէտք է բացատրել, որ այդ տեսակ անձնաւորութիւններն աւելի դիւրին են սուզվում կարիքների ու չքաւորութեան ծովք, եւ հանապազ իրենց զրգուումների ու կրքերի գերի դառնում:

Այս օրինակ թշուառ արարածների, որոնց մտածողութիւնը մանկութիւնից իսկ ստացել է անբնական ուղղութիւն, կարգն է դասում Մենդէլը նաեւ նրանց, որոնց զանազան հիւանդութիւններ այլանդակել են, եւ որոնք դպրոցում սովորաբար ծաղր ու ծանակի առարկայ են լինում, իսկ տանն էլ՝ ստէպ ենթակայ կոպիտ վարուողութեան ու անարգանքի:

Սոքա փոքրութիւնից սկսած ամբողջ աշխարհն իրենց թշնամի են հաճարում, եւ մեծանում են սնուցանելով իրենց սրտի խորքերում անսահման զայրոյժ:

Ուսում աւարտելուց յետոյ՝ իրենք իրենց ուժերին թողնուած՝ նոքա գոյութեան կռուում վերստին զգում են իրենց վրայ անձուռնի կազմուածքի բոլոր հետեւանքները:

Այդ անձինքն իրենց գործած ոճիրները համարում են իբրեւ ռիսակալութեան մի գործ, որ կատարում են հասարակութեան դէմ իրենց անձը պաշտպանելու համար:



Յանցաւորների մեծամասնութիւնը գոյութեան ինքնուրոյն կռուի համար զուրկ է անհրաժեշտ ընդունակութիւններից. եւ որպէս զի իւր կեանքը պահպանէ՝ անձնատուր է լինում ոճիրների:

Ով իւր բարի կամքի հակառակ եւ չնայած իւր բոլոր ճիգերին՝ անզօր է լինում գոյութեան կռուում կանգուն մնալ, այնպիսին յաճախ ստիպուած է յանցաւորութեան ու պոռնկութեան գիրկը նետուել. եւ որքան թոյլ է նորա դիմադրութեան ոյժը, նոյնքան էլ մոլութիւններով վարակուելու վտանգը անխուսափելի է:

Հասարակութիւնը իւր մէջ թաքցրած ունի բոլոր մոլութիւնների սաղմը, եւ ինքն է պատրաստում բոլոր տեղի ունեցող ոճիրները:

Յանցաւորը միայն մի գործիք է, որ այդ ոճիրներն է կատարում:

Իւրաքանչիւր հասարակական խաւ արտադրում է որոշ թուով եւ որոշ տեսակի ոճիրներ, որոնք հասարակութեան կազմի անխուսափելի հետեւանքներն են:

Ժ.

### ՅԱՆՑԱՆՔ ԵՒ ԱՅԼԱՍԵՐՈՒՄՆ.

Այլասերումն, ասում է մի յայտնի պրոֆեսոր, ոչ յանցանք է եւ ոչ խելացնորութիւն. նա միայն մի հող է, որի վերայ զարգանում են առաջինի ու վերջինի կանխօրէն տրամադրող պատճառները:

Բացատրենք աւելի մանրամասն:

Այլասերումն ասելով ընդհանրապէս հասկանում են՝ ցեղ կազմող անհատների թուի աստիճանաբար նուազումը, նոցա ժառանգական տկարացումը, հիւանդութիւնը, բեղմնաւորութեան պակասումը, եւ վերջապէս սպառումը:



Մարդկութեան այլասերման էական պատճառները շատ բազմաթիւ են, եւ կարելի է հետեւեալ չորս դասերին բաժանել.

1. Աշխարհագրական ու կլիմայական, անսովոր չափազանց ջերմութիւնը կամ ցուրտը, երկրի կամ օդի խոնաւութիւնը, ճահիճների վնասակար արտաշնչումները եւ այլն այս բոլորը որոշ պայմաններում առաջ են բերում մահացու ջերմ, քութրա, կրիտենիզմ:

2. Վատ առողջութիւնն եւ ժառանգական հիւանդութիւններ. այս դէպքում մարդու գլխաւոր թշնամիներն են—սիֆիլիսը, գեղձախտը (աւշային գեղձերի քրոնիկական տուբերկուլօզը-բորբոքումը), ծաղիկը, թոքախտը, բորոտութիւնը, անգլիական հիւանդութիւնը, ջղային կազմի սպառումը:

3. Գիպոլաւաժական եւ սիստեմատիկ թունաւորումն: Առաջինը երեւան է գալիս, երբ կազմուածքի մէջ առանց դիտաւորութեան եւ կամ չարամտութեան ներմուծվում են ուժեղ թոյներ. սա հազուադէպ է եւ սակաւաթիւ մարդկանց է պատահում:

Իսկ սովորաբար գործածուող ու կամաց-կամաց ներգործող թոյները՝ օդին, աֆիոնը, ծխախոտը եւ այլն, հարուածում են բազմաթիւ մարդոց:

4. Վերջապէս հասարակական կազմի պակասութիւնները:

Այս վերջինը շատ անգամ ամենավնասակար հետեւանքներ է ունենում մարդկանց ձակատագրի վրայ. այս կարգին պատկանող երեւոյթներից ամենավնասակարներն են, 1) մտաւոր ու ֆիզիքական ուժասպառ աշխատութիւնից առաջ եկած յոգնածութիւն, 2) աննօրմալ ամուսնութիւններ եւ ընդհանրապէս անկանոն սեռական մերձաւորութիւններ, 3) մարդկանց չափազանց կուտակումն մեծ քաղաքներում, որտեղ առողջապահիկ պայմաններն անշուշտ

վատ են լինում եւ հիւանդացումն էլ աւելի հաւանական է. 4) չքաւորութիւն ու սարկութիւն, որ զրկում են մարդկանց նիւթական օժանդակութիւնից ու ոտորացնում են նոցա բարոյականութիւնը, 5) պատերազմ—այսինքն՝ ընտիր անհատների ոչնչացումը. աւազակութիւններ, մարդասպանութիւններ ու ամբողջ գիւղերի հրդեհումներ:

Աշխարհագրական ու կլիմայական ազդեցութիւնը ամենաընդհանուրն է եւ մեծ մասամբ անվրիպելի:

Այրեցեալ գօտու բնիկը՝ օրինակ նեգրը, որքան էլ լաւ կազմուածքի տէր լինի եւ որքան էլ իր տանը առողջ զգայ իրեն, ցուրտ երկիրներ տեղափոխուելիս սովորաբար թոքախտից մեռնում է:

Այսպէս եւ էսքիմոսներն ու այլ բեւեռաբնակ ազգերը չեն կարողանում տանել ջերմութիւն, եւ մինչեւ անգամ մահուան զոյ են լինում տաք-բարեխառն կլիմայում:

Երբեմն պնդում էին, թէ միջին գօտու բնիկները, օրինակ եւրոպացիները, կարող են ընտելանալ ամէն տեսակ կլիմայի, բայց այս կարծիքը շատ ճիշտ չէ:

Անգլիացիք, կարծես՝ այն ժողովրդներին են պատկանում, որոնք տարածուած են աշխարհիս ամէն կողմը, բայց եւ այնպէս դեռ չեն կարողանում ընտելանալ Հնդկաստանի կլիմային, չնայելով կենցաղական այն բոլոր յարմարութիւններին, որ սովորաբար վայելում են:

Իրենց վնասակարութեամբ, որ կաշկանդում է մարդկանց աճումը, աւելի կորստաբեր հետեւանք ունին այն համատարած հիւանդութիւնները, որոնք յատուկ են բոլոր կլիմաներին ու ժողովրդներին, եւ

որոնք մանաւանդ մէկից միւսին են անցնում շօշափումով կամ ժառանգականութեամբ:

Դա սիֆիլիսն է, ծաղիկը, թոքախտը, անգլիական ցաւն ու խելացնորութիւնը:

Յիշեալ հիւանդութիւնների ամենավատ յատկութիւնն այն է, որ խոր արմատներ են ձգում մարդկային օրգանիզմի մէջ, եւ ապա արտայայտվում քրօնիկական վատարիւնութեամբ, որ երբեմն բացարձակ աչքի է զարնում, երբեմն էլ աննկատելի պահվում, բայց եւ այնպէս զգալապէս արտայայտվում են հիւանդների ու նոցա բոլոր ժառանգների վրայ:

Եթէ երկու ամուսիններն էլ տկար են, նոքա միանգամայն զուրկ են առողջ զաւակ յարուցանելու ընդունակութիւնից:

Այստեղ պէտք է աւելացնել նաեւ, որ երեխաների մտաւոր թուլութիւնն ընդհանրապէս ծնողների նախկին հիւանդութիւնների արգասիք է:

Սիֆիլիսն առողջ անհատներից անցնում է միմիայն բացառապէս սիֆիլիսով հիւանդ մարդուց, եւ այս եղանակով վարակուելը սովորական է:

Սիֆիլիսի՝ սերունդի վրայ ունեցած ազդեցութեան ուսումնասիրութիւնը պարզ ցոյց է տալիս, թէ ի՛նչ մեծ սոցիալական նշանակութիւն ունի այդ հիւանդութիւնը:

Ամուսնու սիֆիլիսը միշտ պատճառ է լինում կնոջ վիժումներին ու անժամանակեայ ծննդաբերութեան, որ անկասկած ինքնըստինքեան ազդում է ազգաբնակչութեան աճման վրայ:

Այդ դեռ ոչ ի՛նչ անցնելով սերնդին՝ հիւանդութիւնն արտայայտվում է կեանքի ո՛չ միայն առաջին շաբաթներում կամ ամիսներում, մեծ մասամբ մահաբեր լինելով նորածինների համար, այլ եւ երեւան է գալիս պատանեկան ու երիտասարդ-



ական հասակներում աւելի ծանր կերպարանքով ու հարուածումներով:

Սիֆիլիսը չտալով հանդերձ շատ անգամ նկատելի նշաններ, կորստաբեր ազդեցութիւն ունի սերունդի վրայ իբրեւ այլասերման հզօրագոյն գործօններից մէկը:

Իսկ այլասերումը, ինչ էլ որ լինին առաջ բերող պարագաները, կ'լինի կազմական տեսակէտով գրեթէ միշտ տալիս է միատեսակ, պարզ ու որոշ նշաններ:

Այլասերումն երկու գլխաւոր յատկանիշներով է բնորոշվում. դա՛ հոգեկան-ֆիզիքական ընդդիմադրութեան եռանդի թուլացումն է (մտաւոր անհաւասարակշռութիւն ու ամէն տեսակ կորստաբեր ազդակների ենթակայութիւն), եւ սերնդի աստիճանաբար սպառում:

Ի հարկէ այստեղ, ինչպէս եւ ամենուրեք, այլասերումն իւր աստիճաններն ունի:

Սկսած տկարամիտներից, ապուշներից, բնածին-խելագարներից, հիստերիականներից եւ վերջացած բարոյապէս բթացածներով, ջղագարներով (նէյրաստիկ). իսիխոպատներով՝ հիւանդների կամ անհաւասարակշիռ անհատների այս ամբողջ շարքը սիֆիլիտիկն՝ իւր սերնդի միջոցով՝ թողնում է հասարակութեան:

Եւ հասարակութիւնը ստիպուած է բժշկել հոգալ, դատել, պատժել կամ ուղղել մի այսպիսի սերունդ, որ միանգամայն տկար է եւ անընդունակ գոյութեան ինքնուրոյն կռուին:

Վերջապէս՝ վերջին տարիների հետազօտութիւնները հաստատում են, որ թէ՛ ստացական, եւ թէ՛ ժառանգական սիֆիլիսը՝ բացի նրանից որ արտայայտվում է հիւանդ օրգանիզմի մէջ տարբեր նշան-



ներով, մի եւ նոյն ժամանակ մի շարք ծանր ցաւերի պատճառ է լինում, 'ի միջի այլոց օրինակ' ողնուղեղի հիւճման (տաբես) եւ յառաջագնաց անդամալուծութեան (պրոգրեսիւ—պարալիչ):

Թունաւոր նիւթերով թունաւորուիլը, օրինակ զառիկով (մկնդեղ), բացառիկ երեւոյթ է, եւ հետեւանքը լինում է կա՛մ ինքնասպանութիւն եւ կամ մարդասպանութիւն. Թոյնն ինքնըստինքեան դեր է խաղում միմիայն իբրեւ մի զէնք, ինչպէս դանակը կամ ատրճանակը եւ ոչ իբրեւ մահուան հիմնական պատճառ:

Մարդկանց առողջութեան վրայ առաւել վնասակար ազդեցութիւն են թողնում թոյլ թոյները, որոնք մեծ մասամբ ընդհանրացած են իբրեւ եռանդգրգռող կամ իբրեւ հասելի թմրեցուցիչ նիւթեր:

Այդ թոյների մէջ ամենագլխաւոր տեղն է բռնում ոգին (սպիրտը). սա ամէն ինչ թունաւորում է, ամէն ինչ քայքայում:

Ե՛թէ ալբոհոլի վնասը թշուառ արբեցողին միայն անձնապէս լինէր, դորա հետ թերեւս մասամբ կարելի լինէր հաշտուել. բայց չէ՞ որ այդ 'ախտը իր կորստաբեր ազդեցութիւնը տարածում է նաեւ արբեցողի սերունդի վրայ:

Սրա որդիքը յաճախ ապուշ են ծնվում եւ աւելի յաճախ նոքա տանջվում են վերնոտուժեամբ (ընկնաւոր հիւանդութիւն), հիստերիայով եւ ամէն տեսակ նեւրալգիով:

Բթամտութիւնն ու ցասկոտութիւնը նմանապէս սովորական երեւոյթ է վերջիններիս մէջ՝ մինչեւ անգամ հասակ առած ժամանակ:

Երբեմն արբեցողների զաւակներն անդամալոյծ են դառնում:

Արդէն հասակ առած ալբոհոլիկները, թէպէտեւ

ծնուել են եւ կամ սնուել միանգամայն առողջակազմ, շատ արագ են ծերանում, եւ 40-45 տարեկան հասակում բոլորովին զառամած են երեւում:

Աֆիոնը մի քանի արիւելեան ազգերի, մանաւանդ չինացիների՝ համար նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ ոգին (սպիրտը) եւրոպացիների վերաբերմամբ:

Ընդհանրապէս աֆիոն ծխողներն իրենց բնաւորութեամբ ալքոհոլիկների համեմատութեամբ նուազ կատաղի են, բայց եւ այնպէս՝ նոցա ոյժերի սպառումն աւելի արագ է ընթանում:

Սովորաբար նոքա անզաւակ են լինում, իսկ եթէ յարուցանում են, այն էլ թուլակազմ է լինում:

Վերոյիշեալ թոյների կարգը կարելի է դնել նաեւ մորփին ու եթերը:

Մարդկութեան այլատեղման սոցիալական պատճառների մէջ առաջնակարգ տեղ պէտք է տալ այն երեւոյթներին, որոնք օրգանիզմը ծանրաբեռնում են մտաւոր կամ ֆիզիքական չափազանց աշխատանքով:

Իւրաքանչիւր օր 12—15 ժամ շարունակուող ստէպ ծանր՝ աշխատանքը այնպիսի երկիրներում, որոնք իրենց քաղաքակրթուած են համարում, աւելի քան մի տեսակ բռնակալութիւն է մարդկային օրգանիզմի վրայ, որ յամբաքայլ, բայց եւ անվրէպ աւերում, քայքայում է մարդու կեանքը:

Այդ տեսակ չափազանց աշխատութիւն նամանաւանդ կորստաբեր հետեւեանքներ է ունենում երեխաների վրայ:

Երկարատեւ աշխատութեան արդիւնաւէտ լինելու մասին եղած թերի հասկացողութիւնն է պատճառ, որ մանկավարժները միշտ յոգնեցնում են երեխաներին, ստիպելով սոցա հինգ-վեց ժամ շարունակ նստել դպրոցում եւ մօտ երեք ժամ էլ տանը՝ սերտողութեան համար:

Մա նշանակում է՝ միանգամայն սպանել մատաղ օրգանիզմը, կաշկանդել նրա մկանուները, ոսկրների եւ մարմնի այլ մասերի կանոնաւոր զարգացումը, զփուարացնել մարսողութիւնը եւ այլն:

Ներկայումս յիբաւի այս ու այն կողմից ձայներ են բարձրանում մանկավարժական այդպիսի բռնակալութեան դէմ, սակայն ե՞րբ կիրականանան մտքի ու մարդասիրութեան այդ իրաւացի պահանջները—տակաւին հարց է մնում:

Բայց եւ այնպէս մեր մատաղ սերունդը կրթում են այնպէս, որ կարծես նպատակ դրած լինին կարձեղ նրա կեանքը, արտադրել վատուժ անհատներ եւ նպաստել մարդկութեան այլասերման:

Մարդկային սերնդի տարրալուծման, հետեւապէս եւ նրա սպառման երկրորդ սոցիալական պատձառը պէտք է համարել ազգակցական ու անհաւասար (հասակն առած այր ու նորատի կին, եւ ընդհակառակն) ամուսնութիւնները:

Տակաւին հնում յայտնի էր այն փաստը, թէ մօտիկ ազգակիցների կամ արենակիցների ամուսնութիւնից լոյս աշխարհի են գալիս թուլակազմ, հիւանդոտ եւ նոր սերունդ առաջացնելու անընդունակ զաւակներ. այդ փաստն 'ի նկատի էր առնուած ամենուրեք՝ եւ խիստ օրէնքներ սահմանուած նմանօրինակ ամուսնութիւնների դէմ:

Ի ոլոր բնախօսներն ու մարդաբանները միաձայն հաստատում են, թէ ոչ ազգակիցների մէջ կատարուած ամուսնութիւններն աւելի արգասաւոր են եղել, եւ են:

Կենդանի ապացոյց կարող են ծառայել անգլիացիները, որոնց մէջ սովորական երեւոյթ է օտարների հետ ամուսնանալը:

Ամուսնութեան ժամանակ ապագայ սերնդի



բախտն որոշելու համար անհրաժեշտ է 'ի նկատի առնել պսակուող անձանց ընտրութիւնը:

Հարուստ եւ անուանի հարսնացուն, լինի նա թէ-կուզ բնախօսական տեսակէտով հրէշ, հանապաղ կարող է փեսացու գանել. նոյնպէս եւ էպիլեպտիկը, սիֆիլիտիկ միլիոնատէրը հարսնացու գանելու նկատմամբ միշտ ապահով կարող են լինել:

Ամուսնացողների ֆիզիքական պակասութիւնները, էլ չենք ասում բարոյական յատկութիւնները, բնաւ հաշուի չեն առնվում. ամուսնութեան լուծն ընդունողներին սովորաբար այդ ամէնն անյայտ է մնում, իբրեւ մի այնպիսի բան, որն իմանալը կարծես պատուաբեր չէ:

Ժամանակակից մարդկութեան տնտեսական, քաղաքական ու սոցիալական պայմանները դժբախտաբար այն աստիճանին են հասել որ ազգաբնակչութեան մասսաները դէպի քաղաքներ են ձգտում 'ի վնաս գիւղերի:

Քայց որովհետեւ գիւղերից հեռանում են գլխաւորապէս ընդունակ եւ ուժեղ տարրեր, որոնք յոյս են տաժում քաղաքներում ձեռք բերել աւելի բարեւից դրութիւն, քան որ տալիս էր հայրենի գիւղը, ուստի պարզ է, որ հանդէս է գալիս գոյութեան սարսափելի կռիւ, ուսկից աւա՛ղ շատ քչերն են յաղթող դուրս գալիս:

Մինչեւ այժմ յիշատակուած հիւանդութեան ու մահացութեան բոլոր տեսակները կարելի է քաղաքացիական անուանել:

Գոքա ուղիղ հասցնում են մարդուս օրհասական նպատակին, թէպէտ եւ դանդաղ, եւ իրենց հետեւանքը հրապարակ հանում տարիներ ու դարեր վերջը:

Քոլորովին այլ բան է, եւ այլ խորհրդածութիւնների նիւթ է տալիս մարդկանց արիւնահեղ ու սիստեմա-



տիկ ոչնչացումը պատերազմների միջոցով, եւ խաղաղ ժամանակում զինուորական ծառայութեան պատրաստութեամբ:

Նախ եւ առաջ՝ զինուորականութիւնն ազգաբնակութիւնից՝ շլատում խլում է միլիոնաւոր առողջակազմ ու արգասաբեր անդամներ:

Երկրորդ՝ ֆիզիքապէս ընտիր, մարդկութեան արական մասի ներկայացուցիչներն արշաւանքների ու կռիւների ժամանակ հարիւրներով ու հազարներով զոյ են գնում. հետեւապէս ոչ միայն իրենք են կորչում, այլ եւ խափանում են ապագային նոր սերունդ առաջացնելու կարելիութիւնը:

Ուստի եւ ասպարէզը մնում է յատկութեամբ աւելի ստոր անհատներին, որոնք եւ պէտք է ապագայ սերնդի պատճառ լինին:

Ուրեմն այլասերման երեւոյթները հանդէս են գալիս, նախ՝ իբրեւ օրգանական, ապա իբրեւ հոգեկան, եւ վերջապէս՝ իբրեւ սոցիալական փաստ:

Իբրեւ օրգանական փաստ՝ նա հետեւանք է մարդկային օրգանիզմի այս ու այն մասերի թերութեան ու նոցա անհաւասարակշռութեան. իբրեւ հոգեկան փաստ—հետեւանք է օրգանիզմին յարակից հոգեկան անբաւարար գործունէութեան, եւ վերջապէս իբրեւ սոցիալական փաստ՝ արգասիք է այնպիսի սոցիալական պայմանների, երբ մի անհատ անկարող կը լինի մինչեւ անգամ բաւականութիւն տալ այն տարրական պահանջներին, որ հասարակութեան տեսակէտով պէտք է նա ունենայ իբրեւ որոշ վիճակ ունեցող էակ:

Օրինակ՝ հասարակութիւնը պահանջում է որոշ հասարակական դիրք վայելող անհատից՝ ջանասիրութեան ու գործունէութեան մի որոշ՝ գէթ նուազ աստիճան, այն ինչ նա քիչ թէ շատ անընդունակ է

լինում այդ կատարելու:

Հասարակութիւնը դիցուք պահանջում է, որ մարդս իւր ցանկութիւնները, ձգտումներն ամենախիստ կերպով զսպէ. իսկ նա այս կամ այն պատճառով անկարող կը լինի իրեն զսպել:

Հասարականութիւնը պահանջում է բարեացակամութեան որոշ անհրաժեշտ չափ ունենալ դէպի շրջապատողները, իսկ անհատը միանգամայն զուրկ է այդպիսի զգացմունքից եւ այլն:

Ահա սորա են այն փաստերը, որ երեւան է հանել գիտութիւնը:

ԺԱ.

## ՄԱՔԱՌՈՒՄՆ ՅԱՆՅԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ.

Այն հարցը՝ թէ կարելի՞ է արդեօք բնաջինջ անել յանցանքները, կամ գոնէ նուազեցնել, եւ նոցա երեւնալը բացառիկ դարձնել՝ շատ էական նշանակութիւն ունի:

Զանազան ժամանակ այլ եւ այլ միջոցներով կարծում էին, թէ արմատահան կարող էին անել այդ չարիքը, սակայն բոլոր ձեռնարկութիւններն ապարդիւն էին անցնում, եւ բնականօրէն այլապէս չէր կարող լինել:

Ենթադրում էին, թէ բաւական կըլինի միայն ոչնչացնել աչքի զարնող չարիքի եղանակները, բնա հոգ չտանելով, թէ թոյնը տակաւին մնում է հիւանդօրգանիզմի ներսը, եւ վաղ թէ ուշ նա վերստին երեւան կը գայ նոր ձեւով:

Ոչ պոռնկութիւնը, ոչ յանցաւորութիւնը եւ ոչ էլ որ եւ է մոլութիւն, որոնք սոցիալական հանգամանքների արգասիք են, բնաւ կարելի չէ անհետացնել ոկ անձնական ցանկութեամբ, կամ մէկի հրամանով:

ժամանակակից հասարակութիւնը յիրաւի հնարաւորութիւն ունի ոչնչացնել անառակութեան բները—սա փողի հարց է. բայց քանի որ գոյութիւն ունին մոլութիւններ, չքաւորութիւն, ալքոլականութիւն, օրինաւոր ընտանեկան կեանքի բացակայութիւն, առողջապահութեան վերաբերեալ անհետեծ հասկացողութիւն եւ այլն—այդ բոլորը քանդուելով մի բնից, կը սկսէ որոնել եւ հարկաւ կը գտնէ կայեան մի նոր բնում. . .

Այստեղից անշուշտ հարկ չկայ հետեւցնել, թէ չարիքների կարծումն անկարելի մի բան է:

Ներկայումս, որքան որ կարող է գոյութիւն ունենալ Ֆլամարիտ հասկացողութիւն ու բարի կամք, տակաւին հնարաւոր է, թէեւ նուազ արդիւնքով, քիչ թէ շատ մի բան անել:

Գերմանական օրէնսդրութեան հիման վրայ տասներկու տարին չլրացրած երեխայք կատարած ոճիրների համար ազատ են քրէական պատասխանատուութիւնից եւ յանձնվում են միմիայն կրթական կամ ուղղիչ ապաստանարաններին:

Նմանապէս տասնեւութ տարեկան չեղած պատանիները, որոնք իրենց արարքների յանցաւոր լինելը հասկանալու ընդունակ չեն եղել, յանձնվում են յիշեալ ապաստանարաններին, ուր եւ պահվում են վարչութեան հսկողութեան տակ, մինչեւ որ լրանայ քսան տարեկան հասակը:

Բայց եթէ այդ ոճիրը կատարուած է միանգամայն գիտակցորէն, այն ժամանակ անչափահաս յանցագործը, թէկուզ տասնեւութ տարին լրացրած չլինի, կարող է ենթարկուել բանդարգելութեան, հասակաւոր յանցաւորներից բոլորովին անջատուած:

Դժբախտաբար հասարակութիւնը տակաւին շատ սակաւ է հետաքրքրվում բարոյապէս փճացած երե-



խաներով, որոնք թէեւ տակաւին չեն գործել որ եւէ ոճիր, բայց գէթ հակումն ունին:

Մի անգամ պատժուածը արդեօք ինչո՞վ է ապահովուած, որ ապագային նոյն տեսակ մեղք գործելու չէ:

Արդեօք ժամանակակից պատիժները կրթիչ ազդեցութիւն թողնո՞ւմ են նոցա վրայ:

Ո՛չ, եւ չեն էլ կարող թողնել, քանի որ պատիժ կրելուց յետոյ յանցաւորը վերստին մտնում է նոյն անմխիթար պայմանների մէջ, որոնք նրա անկման պատճառ էին դարձել:

Ընդհակառակն՝ այժմ աւելի եւս դժուար է արել ազնիւ կեանքով, եւ վաղ թէ ուշ նա կը մտնի «անուղղայ»-անդրադարձ յանցաւորների շարքը, մտնաւանդ որ բանդարգելութիւնը, ինչպէս փորձերն են ցոյց տալիս, ոչ մի իրական ազդեցութիւն չեն ունենում:

Բերլինի քարոզիչ Բագոցկին շատ իրաւացի նկատում է, թէ անչափահաս յանցաւորը, որ միայն գործնականապէս է ծանօթ ոճիրների հետ, բանդերում հնար ունի նաեւ ձեռք բերել տեսական ծանօթութիւն ոճիրների վերաբերմամբ:

Թէեւ փոքրահասակ կալանաւորը մեծերից անջատ՝ առանձին շինութեան մէջ է գտնվում, այնուամենայնիւ իւր հասակակիցների՝ յաճախ իրենից աւելի փորձուած ոճրագործների շրջանում նա ենթակայ է լինում կորստաբեր ազդեցութեան:

Մինչեւ իսկ եւ այն պատանին, որին ուղղելու նպատակով բանդ են ձգած՝ նորից կեանք մտնելիս յաճախակի անդրադարձ ոճրագործ է դառնում, եւ այլապէս չի էլ կարող լինել, քանի որ կարիքը, շրջապատող դժբան պայմանները վերստին կաշկանդում են իրենց ցանցերի մէջ՝ քիչ թէ շատ ուղղուած յանցաւորին:



Փորձերն ապացուցել են, թէ կարճատեւ բան-  
դարգելութիւնը մանաւանդ անչափահաս ոճրագործ-  
ների վերաբերմամբ՝ միմիայն վնասակար ազդեցու-  
թիւն ունի. որովհետեւ պատանիներն բանդերում  
անսպասելի կերպով յանցաւորութեան իսկական ա-  
ռաջնորդներ են գտնուում:

Յանցաւորների հետ վարուելու ամենաշիտակ  
եղանակը ոչ թէ պատժի մէջ պէտք է կայանայ, այլ  
այնպիսի միջոցների գործադրութեան մէջ, որոնք հե-  
ռու պահէին մարդկանց այլ եւս ոճիրներ գործելուց:

Յանցաւորութիւնը նուազեցնելու ամենալաւ  
գրաւականն է՝ հեռու պահել երեխաներին բարոյա-  
կան ապականութիւնից:

Երեխաների փճանալը ամենամեծ յանցանքներից  
մէկն է թէ անչափահասների եւ թէ հասակաւորների  
համար:

Գիտողութիւններն ակներեւ հաստատում են, թէ  
վնասակար միջավայրից ժամանակին հեռացրած  
անհատները՝ դաստիարակութեան շնորհիւ ապագայ  
կեանքում մեծ ընդդիմադրութիւն են ցոյց տալիս  
ամէն տեսակ գայթակղութիւնների. եւ իրենց զբաղ-  
մունքների շնորհիւ, գոյութեան կռիւն աւելի հեշ-  
տութեամբ են տանում համեմատութեամբ այն ան-  
ձանց, որ մեծացել են վատթար շրջանում:

Այս նկատողութիւնների ճշմարտութեան վկայում  
է Անգլիայի պատմութիւնը, որտեղ քառորդ դար  
սրանից առաջ սկսել էին լուրջ միջոցների դիմել,  
որպէս զի ընտանեկան դաստիարակութիւնից եւ  
հսկողութիւնից զուրկ երեխաներն ու պատանիները  
դաստիարակուին ու բարոյապէս կրթուին:

Ուստի՝ չնայելով ազգաբնակչութեան զգալի աճ-  
ման, տեսնում ենք, որ Անգլիայում յանցաւորների,  
մանաւանդ անչափահաս ոճրագործների, թիւն աս-  
տիճանաբար նուազում է:

Գեոաֆաս, տակաւին տասնութ տարին չբացրած յանցաւորները, որոնք 1879 թուին 10,300 հոգի էին, 1892 թուին արդէն 3800 հոգի էին. հասակաւոր յանցաւորների թիւը 1870 թուին հաւասար էր 12,000-ի, 1894 թուին՝ 7000 հոգու:

Այս թուերն 'ի նկատի առնելիս, ասում է Հիւրը, հարկաւոր է նաեւ չմոռանալ Անգլիայի չքաւորների դրութեան անօրինակ պայմանները:

Կեանքի միջոցներից զուրկ իւրաքանչիւր անձն իբրեւ «աղքատ» օգնութիւն է ստանում հասարակական հասոյթներից:

Միմիայն Լոնդօնում մօտ 100,000 հոգի այդպիսի օգնութիւն են ստանում. բարեգործական նպատակների համար քաղաքն ամէն տարի ծախսում է 50 միլիոն րուբլի:

Եթէ Անգլիայում իւրաքանչիւր տարի յանցանքների թիւը հետզհետէ իջնում է, սրանից հարկաւ չի կարելի եզրակացնել, եթէ յանցաւորութեան աղբիւրն էլ անհետացած է:

Բոլոր յանցանքների աղբիւրը—չքաւորութիւնը— Անգլիայում նոյնպիսի մեծ ծաւալով է տարածուած, ինչպէս եւ միւս երկիրներում. եւ այդ չքաւորութեան հետեւանքները կարող էին երեւան գալ աւելի ուժգին կերպով, ինչպէս եւ այլ տեղերում, եթէ չլինէր Անգլիայում աղքատների վերաբերեալ իւր տեսակի օրէնսդրութիւն, որ ոչ մի խտրութիւն չի դնում յանցաւորների ու անպարտ չքաւորների մէջ:

Անշուշտ, մասնաւոր ձեռներէցութեամբ ու հասարակական բարեգործութեամբ հնարաւոր է միշտ կորստից փրկել առանձին անհատներ. այս հաստատեցին բազմաթիւ ընկերութիւններն, որոնք իրենց նպատակ են դրել բարւոքել չքաւորների դրութիւնը:

Պոռնկութեան դէմ մաքաւելում ժամանակակից

հասարակութիւնը նոյն արգելքներին է հանդիպում, ինչպէս եւ յանցաւորութեան մէջ:

Պոռնկութեան զարգանալուն նպաստող հանգամանքներից մէկն էլ, ինչպէս արդէն գիտենք, չբաւորութիւնն է. ուրեմն ո՛չ ոստիկանական կանոններով եւ ո՛չ էլ բարոյական քարոզներով, այլ միմիայն չբաւորութիւնը խափանող միջոցներով կարելի է կռուել այդ չարիքի դէմ:

Տնտեսական պայմանների բարւոքում, հիւանդութեան սաղմերի հիմնական ոչնչացումն— ահա ներկայ հասարակական կազմի չարիքների դէմ մաքառելու ամենալաւ եղանակը:

Սոցիալական ախտերի դէմ անհրաժեշտ են սոցիալական դարմաններ:

Քննելով պոռնկութիւնը կենսաբանական (բիոլոգիական) տեսակէտով, նկատում ենք, որ արդի հասարակութիւնն ո՛չ հնարաւորութիւն եւ ոչ էլ ոյժ ունի միանգամից եւ այն էլ արմատից յեղաշրջել իւր կեանքի ձեւերը, խանգարել սոցիալական բարեշրջման օրէնքները եւ ուղղել բոլոր այլասերուողներին դէպի ճշմարիտ ճանապարհը. ուստի նա ստիպուած է, եւ բարոյապէս պարտաւոր է, ձեռք առնել սրա համեմատ միջոցներ, որպէս զի հասարակութեան առողջ, աշխատող ու յառաջադիմող մասը պաշտպանէ այն չարիքներից, որ պոռնիկներն են հասցնում:

Ահա թէ ինչո՞ւ սիֆիլիսի դէմ մաքառելու հարցի հետ միշտ յարակից է նաեւ պոռնկութեան, սրա հսկողութեան, կանոնաւորութեան, առողջացման եղանակների հարցը:

Պոռնիկները սիֆիլիսով շատ շուտով են հիւանդանում, եւ բազմաթիւ հասարակաց տներում ապրողները յաճախ գտնվում են այդ ախտի վարակիչ շրջանում:



Պոռնիկ կանանց բժշկական քննութեան ենթարկելը ոչ միայն անհրաժեշտ է, այլ եւ անպայման իրաւացի է:

Սակայն եթէ պախարակելի է մարմինը վաճառել, ասացէք խնդրեմ, աւելի ամօթաբեր չէ՞ գիտակցօրէն այդ տեսակ ապրանք գնելը:

Ինչո՞ւ այդ գործի մէջ՝ որ երկու կողմերի համար էլ ստոր է, նոյնպէս եւ վտանգաւոր հասարակական առողջապահութեան համար՝ միմիայն կինը պէտք է իւր վրայ կրէ բժշկական պարտաւորեցուցիչ հսկողութեան ամբողջ բեռը, մինչդեռ տղամարդը՝ նրա մեղսակիցը իրաւունք պիտի համարէ իւր ազատ դրութեամբ նոյն միջոցներով տարածել հիւանդութիւնն աւելի ու աւելի:

Ուրեմն թող ամէնքն ըմբռնեն, թէ ի՞նչ բարոյական ու հոգեկան նշանակութիւն ունի անարատութիւնն՝ամուսնութիւնից առաջ եւ ամուսնութեան ժամանակ:

Այս ամէնը գիտնալով՝ բնաւ կարելի չէ յուսալ, թէ այս տեսակ ճանապարհով հնարաւոր է հասնել իրական բարեկեցութեան, եւ ընդհանրապէս նուազացնել հասարակական այլասերումը:

Յիշատակուած եղանակներն ամենայաջող դէպքերում, կարող են դժբախտաբար լոկ ժամանակաւոր դեր խաղալ:

Այն ժամանակ միայն, երբ հասարակական պայմանները արմատից բարեփոխուին, հնարաւոր կը լինի եթէ ոչ բոլորովին վերցնել յանցաւորութիւնն ու պոռնկութիւնը, գոնէ բացառիկ երեւոյթ դարձնել:



ԺԲ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ, ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ  
ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆՐ.

Դաստիարակութիւնը մարդուս կեանքում ակն-  
երեւ մեծ դեր է խաղում:

Լօկկը պնդում է, թէ հարիւր մարդուց առնու-  
ազն իննսունը, բարի թէ չար, հասարակութեան հա-  
մար օգտաւէտ կամ վնասակար անդամներ են  
դառնում, ոչ թէ իրենց բնածին յատկութիւնների  
պատճառով, այլ միմիայն դաստիարակութեան  
շնորհիւ:

Դաստիարակութիւնն է նաեւ մարդկանց մէջ  
եղած տարբերութեան պատճառը:

Հարկաւ՝ աշխարհումս կան նաեւ այլափոխուած  
հոգեկան-Ֆիզիքական կազմուածքով անհատներ,  
բարոյապէս ցնորուածներ, բնածին ոճրագործներ.  
սոցա վրայ դաստիարակութիւնն ոչ մի ներգործու-  
թիւն չի թողնում. նոքա արդէն իրենց ծնուած վայր-  
կենին կրում են յանցաւոր ու փճացած բնոյթների  
բոլոր առհաւատչեան:

Սակայն շատ յանցաւորներ ընդունակ են դաս-  
տիարակութեան ներգործութեան ենթարկուել:

Մինչեւ անգամ Լամբրոզոյի կարծիքով՝ մարդը  
կարող է բարոյական զգացմունքներ ձեռք բերել:

Բոլոր երեխաներն իրենց հակումների համեմատ  
ձեռք են բերում այդ զգացմունքը քիչ թէ շատ ջան-  
քերով. բայց բնածին բարոյական զգացմունք ասած  
բանը բնաւ գոյութիւն չունի:

Իտալական այդ գիտնականը մանրամասնօրէն  
բացատրել է, թէ որքան յաճախ են երեխաների մէջ  
խաբեբաներ, գողեր, որկրամոլներ, անգութ, զայրաց-  
կոտ ու ոխակալ բնաւորութիւններ:

Բարեբարոյ օրինակներ, խրատների հետ կցորդած, նաեւ երբեմն երբեմն թեթեւ պատիժներ— ահա այն միջոցները, որոնք միանգամայն բաւական են երեխաների մէջ բարի զգացմունքներ պատուաստելու համար:

Մի բանի բնոյթներ, որոնք իսպառ ու խորապէս ապականուած են, եւ չեն ենթարկվում այս միջոցների ազդեցութեան, նոքա կամ բնաւ չեն ուղղուիլ կամ եթէ ուղղուին էլ, գոնէ շատ աննշան աստիճանով:

Սակայն, որոնց սրտում որ գոյութիւն ունին բարեբարոյ զգացմունքների նշոյլներ, այնպիսիներն ենթարկվում են դաստիարակութեան ներգործութեան:

Լաւ, ճշմարիտ դաստիարակութիւնն՝ եթէ մարդու հոգու մէջ իւր համար բիչ թէ շատ բաւարար հոդ գտնէ՝ հիանալի ու առատ պատուղներ կը տայ:

Միջավայրը չի ստեղծում մարդկային բնաւորութիւն ու վարմունքներ, բայց նոցա վերայ մեծ ազդեցութիւն ունի:

Գաստիարակութիւնը գրեթէ անկարող է որ եւ է ներգործութիւն ունենալ մեր բնածին հակումների, մտաւոր ընդունակութիւնների, բարոյական արժանիքների ու պակասութիւնների վրայ:

Գաստիարակութիւնը միմիայն ընդունում է այդ բոլոր յատկութիւնները հէնց այն ձեւով, ինչպէս որ գտնում է, եւ ապա տալիս է նոցա տարբեր ուղղութիւններ:

Գաստիարակութիւնն այդ յատկութիւնները կարող է զարգացնել, նպաստող հանգամանքների շնորհիւ, բայց ոչ թէ ստեղծել:

Սյլ խօսքերով՝ հոգեկան-Ֆիզիքական կազմի նախահիմքը բնածին մի բան է, ու այդ կազմի գոյացման սկզբնական պատճառներից կախեալ. դա՛

այսպէս ասենք, հիմնական մի նիւթ է, որի վրայ դաստիարակութիւնն որոշ գործողութիւններ է կատարում, բայց եւ միեւնոյն ժամանակ անկարող է ուժեղացնել կամ նուազեցնել նրա սկզբնական ոյժը:

Միւս կողմից՝ բազմաթիւ անհատներ մուլի մնալով, կարող էին խուսափել յանցանքների ճանապարհից, եթէ մանկութեան ու պատանեկութեան հասակում հոգատար խնամքի ներքոյ գտնուէին:

Իիստ ու հաստատական կրթութիւնը թերեւս նոցա առաքինի չդարձնէր, բայց, շատ կարելի է, արգելէր նոցա կռուի բռնուել հասարակութեան հետ, եւ բանդից ազատէր:

Մարդու որպէս բարոյական էակի մէջ, ասում է Մանեանը, ոճիր գործելու բնածին տրամադրութիւն չկայ. նա յանցաւոր է դառնում դիպուածով կամ արհեստով՝ կրքերի կամ վատ դաստիարակութեան ներքոյ:

Սկանակ յանցաւորներին հանդիպելիս՝ միշտ համոզվում ես, թէ նոցա յանցաւորութիւնը կապ ունի վատ դաստիարակութեան հետ, որ նոցա վատաբարոյ բնազդների զարգանալուն հնարաւորութիւն է տուել:

2<sup>է</sup>՝ որ ստէպ կարելի է դիտել, թէ մարդկանց վրայ ինչպէս են ազդում վատ օրինակները:

Շատ յաճախ ծնողները ոչ թէ չեն խօսում իրենց օրդոց հետ առաքինութեան, պատուի ու ազնուութեան, ընկերսիրութեան, հայրենասիրութեան մասին, այլ ընդհակառակն իրենք հենց նոցա աչքերի առաջ անձնատուր են լինում զանազան մոլութիւնների. հայրը խմում է, գողութիւն է անում, եւ վերջապէս բանդն է ընկնում. իսկ մայրը իւր մարմինն է վաճառում:

Ուստի զարմանալի չէ, եթէ այսպիսի պայմաննե-



րում որդին էլ հօր շաւղով ընթանայ, եւ դուստրն էլ մօր պէս պոռնկութեան զոհուի:

Բայց որքան յաճախ այդ զաւակները յափշտակվում են ընկերների կողմից ու տարվում մոլութիւնների Ֆանապարհով. ի՞նչպիսի կասկածաւոր ծանօթութիւններ կապում իրենց հասակակիցների հետ, բնաւ տեղեկութիւն չունենալով նոցա բարոյական միտումների մասին:

Իսկ այնուհետեւ, երբ երեխան պատանի է դառնում, եւ դիմում է աշխատանքի համար զանազան արհեստանոցներ, նրան այստեղ էլ սպառնում են ոչ պակաս վտանգներ, քան թէ մանկական հասակում:

Քանի՛ քանի՛ երեխաներ կորել են եւ կորչում, այն էլ ընդ միշտ, միմիայն օրինաւոր հսկողութեան բացակայութեան պատճառով այսպիսի վտանգաւոր պահուն:

Սակայն վատաբարոյ շրջանի ազդեցութիւնը միմիայն երեխաների ու պատանիների վրայ չի արտայայտվում:

Իրա ազդեցութեան ենթակայ են նաեւ հասակաւորներ՝ թոյլ բնաւորութեան տէր մարդիկ. վատ միջավայրում նոքա իրենց սեփական ծուլութեան ու մոլութիւնների համար մի տեսակ օժանդակութիւն են գտնում:

Պարկեշտ, վայելուչ բայց բնաւորութեամբ թոյլ մարդը սկսում է յաճախել այս կամ այն պանդոկը. սկզբում այնտեղ գնում է աշխատանքից յետոյ հասնելի երեկոյ անցկացնելու դիտաւորութեամբ:

Բայց շուտով ծանօթութիւններ է ձեռք բերում, եւ ահա իւր նոր ընկերների հետ նստում է գիշերները երկար, խմում, խօսակցում եւ ընդ նմին իւր փողերի մեծ մասը թողնում է պանդոկում, բնաւ հոգ չ' տալնեով, թէ միւս օրն անընդունակ է լինելու եռանդով աշխատելու:



Հետեւեալ օրը ի հարկէ կրկին երեւում է այդ-  
տեղ, եւ անշուշտ պատմում է «բարեկամներին» իւր  
դրամական սուղ դրուածիւնը:

«Բարեկամները» նրան սկսում են դրդել վտանգ-  
աւոր փորձի, անհետացնում են նրա խռովայոյզ խըղ-  
ճի վերջին կասկածները, եւ վերջապէս առաջարկում  
են ընկերաբար որ եւ է ոճիր կատարել, որով հնար  
կունենան բարւոքել իրենց նիւթական կացութիւնը.  
եւ ահա պատրաստ է նրա համար բանդ, որտեղ  
կազմակերպվում է ու պատրաստվում ապագայ  
գործունէութեան համար մոլութիւնների հսկայական  
բանակ:

Որքա՛ն գողութիւններ, որքա՛ն յանցանքներ սո-  
վորաբար նախագծուել են բանդերում, ուր կալանա-  
ւորներին չեն դասաւորում ու տեղաւորում իրենց  
գործած յանցանքների ձեւին ու տեսակին համեմատ.  
եւ ուր սկսնակ գողն անմիջապէս շփուելով արմա-  
տացած ընցիդեւիստի հետ, որ քաջ գիտէ իւր ար-  
հեստի բոլոր գաղտնիքները, որոշ դասեր է առնում  
անշուշտ վերջինից. . .

«Բաց անել մի նոր դպրոց, նշանակում է՝ փակել  
մի բանդ» ասում է մի իտալացի գրող:

Անկասկած՝ բարձր կրթութիւնը վսեմացնում է  
հոգին, ազնուացնում է սիրտը, եւ բարւոյ ու գեղեց-  
կի պաշտաման նպաստում:

Բայց եւ այնպէս՝ նա անզօր է, եթէ իբրեւ դաշ-  
նակից նրան չի զուգընթանում դաստիարակութիւնը,  
այսինքն՝ սովորութիւնների՝ միաւորութիւն, որոնք  
զարգացնում են խղճի նրբազգացութիւն, բացայայտ  
են անում սոցիալական ու մարդկային զգացմունք-  
ների անհրաժեշտութիւնն ու պարտաւորութիւնը, եւ  
վերջապէս ստեղծում են բարոյականութիւն ու  
բարքեր:

## ՎԵՐՋԱՐԱՆ.

Ակներեւ է, որ մարդուս ամենավատ, ամենատոր կողմերի պատճառը՝ նրա կազմի թերութիւնն է:

Ուստի յանցանքները ջնջելու կամ գոնէ այն անձանց թիւը նուազեցնելու համար, որոնք «միջավայրի» շնորհիւ մատնուած են յանցանքների ու պոռնկութեան վտանգին, պէտք է որոշ միջոցներ ձեռք առնել:

Այդ անհրաժեշտ միջոցներն են՝ բարւոքել ամբապնդել այն անհատների առողջութիւնը, որոնք կամ ժառանգաբար կամ վատթար առողջապահական պայմանների պատճառով կանուխ հասակում տրամադիր են ունենալ մի կազմութիւն, որով կարելի չէ բնաւ յարմարուել միջավայրին:

Յանցաւորի բժշկական ուսումնասիրութիւնն առ այժմս հասարակութեան կարող է առաջադրել բաւականին թանկագին խորհուրդներ. անհրաժեշտ է մաքառել ալքոլականութեան դէմ, հիմնել զգաստութեան եւ ժուժկալութեան ընկերութիւններ, հարկաւոր է խիստ բժշկական հսկողութեան ենթարկել այն բոլոր արհեստները, որոնք այսպէս թէ այնպէս վատներգործութիւն ունին առողջութեան վերայ անպայման պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել այն երեխաների վրայ, որոնց ծնողները ինչ ինչ պատճառներով հնարաւորութիւն չունին օրինաւոր կերպով խնամել. հիմնել աշխատութեան բորսաներ, օգնութեան հասնել հիւանդ բանուորներին, բազմացնել բարեգործական արհեստանոցների թիւը, կառուցանել գիշերուայ ապաստանարաններ, ժողովրդական ճաշարաններ. եւ աշխատանքի միջոցով օգնող այդպիսի հիմնարկութիւններ պէտք է գտնուին բոլոր քաղաքներում, որպէս զի իւրաքանչիւր դժբախտ

այր թէ կին, օրհասական րոպէին հնար ունենայ անմիջապէս օգնութիւն հայցել:

Այդ հիմնարկութիւններէ ճակատին պէտք է գրուած լինի. «այստեղ, որոնք որ ցանկանում են աշխատել, կը ստանան օթեւան ու սնունդ». . .

Թող այս միջոցները չհամարուին ժամանակակից կեղծ խանդաղատութիւն յանցաւորներէ վերաբերմամբ:

Սակայն չափսոսանք, որ կարեկցութիւն ենք զգում դէպ ընկածները:

Միայն ափսոսանք, որ այդ կարեկցութիւնը մեր մէջ այդպէս ուշ է արտայայտուում:

Անօգուտ կարեկցութեան գանձերը, որ շուայլում է հասարակութիւնը մարդու անկումից յետոյ, պէտք է շուայլէր նորա անկումից առաջ:

Զէ՞ որ այդ ճիշտ է:

Այն ժամանակ փոխանակ մեր ջանքերի օգտաւէտութեան վրայ թերահաւատելու, փոխանակ անզօրութեան գիտակցութիւն զգալու, կը զգանք, որ նպաստում ենք մերձաւորի վերածնութեան, կը տեսնենք, որ եթէ նախազգուշական եւ յանցաւորին ուղղելու միջոցները—երբեմն իսկ անուրջ են թվում, բայց եւ այնպէս համերաշխութեան օրէնքը՝ արգասաւէտ իրականութիւն է:

Այո՛ հարկաւոր է ՚ի նկատի առնել իբրեւ նոր ապացոյց, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի առողջութիւնն ոչ միայն առանձին անհատներէ, այլ եւ ամբողջ հասարակութեան բարեկեցութեան համար:

Այս փաստերի, ինչպէս եւ իւրաքանչիւր գիտութեան կարեւորագոյն նշանակութիւնն այն է, որ ընդլայնելով մեր ծանօթութիւնը, մեզ դարձնում է աւելի լաւ, աւելի բարոյական. . .



1. Յանցաւորութիւնը կարելի չէ մի առանձնակի, կղզիացած պատճառի—Ֆիզիքականի, բարոյականի կա՛մ սոցիալականի—արդիւնք համարել, այլ դոցա բոլորի կցորդութեան հետեւանք:

2. Ոչ-միշտ՝ ամէն մի յանցաւոր կարող է լինել եւ խելացնոր:

3. Անհրաժեշտ է դատապարտումը տարբերել պատժից:

4. Բանդը պէտք է ծառայէ իբրեւ բարոյականի հիւանդանոց:

5. Անբաւարար ու մոլի բնոյթներից ոմանք ոճիրներ են գործում եւ դիմում բանդեր, աքսոր, իսկ միւսները մնում են տակաւին հասարակութեան մէջ:

Զգործելով յանցանքներ՝ վերջիններն այնու ամենայնիւ շատ չարիքների առիթ են լինում, եւ նպաստում այն բոլորի անբարոյականացման, որոնք շրվում են իրենց հետ:

Միմիայն նախազգուշացումները, որոնք ուղղուած են մտաւորապէս պակասաւորներ, հետեւաբար եւ ոճրագործութեան տրամադիր բնոյթներ կաշկանդելու համար, հնար կը տան լուրջ բարեփոխութիւններ ներմուծելու ոճրագործութեան դէմ մաքառելու համար:

Գրեթէ ամէն ինչ՝ քիչ թէ շատ դիւրին ու հնարաւոր է դառնում, երբ ամէնքը լցուած կը լինին եռանդազին ցանկութիւններով. իսկ այդ եռանդոտ ցանկութիւնն երեւան է գալիս, երբ լաւ են ըմբռնում եւ պարզ տեսնում բոլոր հետեւանքները:

Կռիւր պարտաւորեցուցիչ է, անհրաժեշտ եւ արժանի է գործադրուած ջանքերին:

Այս տեսակ կռիւն ազնուացնում է մարդուս:

Կեանքն առանց կռուի մեռելութիւն է:



## Յ Ա Ն Կ.

- Ա. Յանցաւորութիւն.
  - Բ. Յանցաւոր մարդը.
  - Գ. Յանցանքների տեսակները.
  - Դ. Յանցանք ու պոռնկութիւն.
  - Ե. Կարիք ու աղքատութիւն.
  - Զ. Յանցաւորութեան ու պոռնկութեան նպաստող պայմանները.
  - Է. Ընտանիք ու յանցանք.
  - Ը. Բնակարանների ազդեցութիւնը յանցաւորութեան ու ալքոլականութեան վերայ.
  - Թ. Յանցաւորի ոգին.
  - Ճ. Յանցանք ու այլասերումն.
  - ՄԱ. Մաքառումն յանցաւորութեան դէմ.
  - ՓԲ. Գաստիարակութեան, միջավայրի ու կրթութեան ազդեցութիւնը.  
Վերջարան:
-

R. H. P.

Faint, mostly illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text appears to be organized into several paragraphs, with some lines starting with capital letters. There are some small blue ink marks or corrections scattered throughout the text.



